

## ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՐԳՈՒՄ

ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2005

Դրամաշնորհ № C05-7107

Գլխավոր հետազոտող՝ Բագրատ Հարությունյան

Կոնտակտային տեղեկատվություն՝

Հեռ.: 010 - 58-99-18

E-mail. [bgrat.harutyunyan@gmamil.com](mailto:bagrat.harutyunyan@gmamil.com)

### Հետազոտության հակիրճ նկարագիր

Հետազոտությունը անցկացված է հումանիստական սոցիոլոգիայի ավանդույթների շրջանակում: Կոռուպցիան դիտվել է որպես մի շարք սոցիալական գործողությունների ամբողջություն, որոնք դրսնորվում են կրթական համակարգում:

Հետազոտության արդյունքում պարզվել է կոռուպցիայի ընկալումը, կոռուպցիոն վարքի առավել հաճախ հանդիպող դրսնորումները: Կառուցվել է կոռուպցիոն վարքին դիմելու պատճառների տիպարանությունը: Հետազոտությունը թույլ է տվել ստանալ տիպական ուսանողների և աշակերտների, ուսուցիչների և դասախոսների հավաքական պատկերները և առանձնացնել կոռուպցիոն վարք ցուցաբերողների տիպերը: Առանձնացվել և նկարագրվել է կոռուպցիոն վարքին հատուկ լեզվական միջոցները և վերբալ վարքը:

Հետազոտության արդյունքների վրա կառուցվել են մի քանի մոդելներ, որոնք բացատրում են կոռուպցիոն վարքը, նրա դրսնորման պարբերականությունը և նախաձեռնման որոշ պատճառները:

Կատարվել են կոռուպցիոն վարքի կանխարգելման համար որոշ առաջարկություններ:

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1. ՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԱՍ	4
2. ԱՐԴՅՈՒՆՔԵՐԻ ՎԵՐԼՈՒԹՈՒԹՅՈՒՆ	5
2.1 Կոռուպցիայի ընկալում	6
2.2 Կոռուպցիոն վարքի կողմեր	10
2.3 Կոռուպցիոն վարքին դիմելու պատճառներ	21
2.4 Կոռուպցիոն վարքին հատուկ լեզվական միջոցները և վերբալ վարք	28
3. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՎԱՐՔԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ	32
4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	35

## 1. ՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԱՍ

Կոռուպցիայի ուսումնասիրությանը նվիրված հետազոտությունն անց է կացվել 2005թ. հունիս-օգոստոս ամիսների ընթացքում: Առաջնային տեղեկատվության հավաքման գործում ներգրավված են եղել ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի մագիստրոսները և ասպիրանտները: Հետազոտության նպատակն է հետազոտել կոռուպցիան կրթության համակարգում:

Հիմնական նպատակի իրականացման համար առաջադրվում էին հետևյալ խնդիրները:

1. Հետազոտել կրթության համակարգում կոռուպցիայի դրսնորման ձևերը և առանձնահատկությունները:
2. Բացահայտել այն պայմանները և պատճառները, որոնք նպաստում են կոռուպցիայի տարածմանը:
3. Պարզել կոռուպցիայի ազդեցությունը կրթության համակարգի վրա:

Վերոհիշյալ խնդիրների իրագործման համար հետազոտվել են ավագ դպրոցի աշակերտների, բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների, ասպիրանտների, ուսուցիչների, ծնողների, դասախոսների և աղմինիստրատիվ աշխատողների կարծիքները:

Հետազոտության առաջնային տեղեկատվությունը հավաքվել է որակական մեթոդների օգնությամբ: Մասնավորապես օգտագործվել են հետևյալ մեթոդները.

**Խորին հարցազրույց**, որի միջոցով ապահովվել է գործընթացի բազմակողմանի ու մանրակրկիտ հետազոտությունը և հնարավոր է դարձել բացահայտել խորը և կառուցվածքային կապեր: Անցկացվել է 26 խորին հարցազրույց: Խորին հարցազրույցների ընթացքում պարզվել են կոռուպցիային նպաստող պայմանները և պատճառները, նրա ազդեցությունը համակարգի վրա, պայքարի հնարավոր ձևերը, համակարգի առավել ռիսկային տարրերը և այլն:

**Ֆոկուս-խմբերի մեթոդ**, որի միջոցով ապահովվել է կոռուպցիայի ընկալման տարրերությունների բացահայտումը մասնակիցների առանձնացված խմբերում: Անցկացվել է 8 ֆոկուս խումբ: Ֆոկուս խմբերի մասնակիցներն ընտրվել են պետական և ոչ պետական բուհերի ուսանողներից, շրջանավարտներից և ավագ դպրոցի աշակերտներից, ինչպես նաև պետական և ոչ պետական բուհերի ասպիրանտներից:

Այս երկու մեթոդների զուգորդումն ապահովվել է հետազոտության առարկայի վերաբերյալ լիարժեք և հուսալի տեղեկատվության ստացումը:

Հետազոտության խնդիրները լիարժեք ուսումնասիրելու համար օգտագործվել են երկու գործիք՝ փորձագիտական հարցման հարցաշար և ֆոկուս-խմբերի վարժան ուղեցույցեր՝ բոլոր խմբերի համար ընդհանուր (կոռուպցիայի ընկալում, վարքի ձևեր և այլն) և հատուկ թեմաներով (ինչպես է դրսնորվում կոռուպցիան դպրոցում, ինչպիսի կոռուպցիոն վարքի ձևեր են հանդիպում ասպիրանտուրայում և այլն):

## 2. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կոռուպցիան մեր կողմից դիտարկվում է որպես սոցիալական գործողությունների ամբողջությունը, որը իր մեջ ներառում է՝ կաշառակերության, ազգակցական կապերի օգտագործում, հովանավորչություն, պաշտոնական կեղծիք, պաշտոնական դիրքի կամ կապերի չարաշահում, պետական գույքի և միջոցների ոչ նապատակային օգտագործում: Կոռուպցիոն վարքն իր հերթին դիտարկվում է որպես անհատների փոխազդեցություն: Այդ գործողությունները դիտարկվել են իբրև համակարգ, որն ենթակա է տեսական վերլուծության:

Այն սոցիալական փաստերը, որոնք դրւս են փոխազդեցությունից, համարվում են իբրև ֆիզիկական օբյեկտներ: Ֆիզիկական օբյեկտների բազմությունը ձևավորում է գործողության սուբյեկտի համար պայմաններ և միջոցներ:

Համակարգում առկա են նաև մշակութային օբյեկտներ: Այս օբյեկտների շարքին են պատկանում սիմվոլիկ մշակույթի տարրերը և համալիրները՝ մշակութային ավանդույթները, համոզմունքները, արժեքները, նորմերը և այլն: Մշակութային օբյեկտները դիտվում են որպես իրավիճակի տարրեր, որոնք հաշվի են առնվում սոցիալական գործողության սուբյեկտի կողմից, այլ ոչ թե որպես սուբյեկտի կողմից յուրացված /ինտերիորիզացված/ արժեքներ և նորմեր: Սա նշանակում է, որ գործողությունների կամ փոխազդեցությունների այս կամ այն ուղղվածությունը կապված է “խրախուսանք” ստանալու և “պատժից” խուսափելու հետ: Քանի որ խոսքը գնում է սոցիալական գործողության սուբյեկտի մասին, ապա անհրաժեշտ է նշել, որ “խրախուսանքից” ստացումը և “պատժից” խուսափելը ոչ թե կենսաբանական այլ սոցիալական սկիզբ ունի:

Հետևաբար, սուբյեկտի գործողությունը պայմանավորված է ոչ թե մասնավոր խթաններին արձագանքելու անհրաժեշտությամբ, այլ սոցիալական ակնկալիքների համակարգի առկայությամբ: Այդ ակնկալիքների համակարգը ստանում է հասուլ նշանակություններ սուբյեկտի համար և, դառնալով կոնվենցիոնալ, ձևափոխվում է հասուլ սիմվոլների և նշանների: Այդ սիմվոլների և նշանների միջոցով տեղի է ունենում կոմունիկացիա սուբյեկտների միջև:

Այսպիսով, կոռուպցիան վերլուծվելու է որպես մի երևոյթ, որն իր էությամբ սոցիալական համակարգ է, որը բաղկացած է բազմաթիվ փոխազդող անձանցից (գործողության սուբյեկտներից): Այդ սուբյեկտների փոխազդեցությունը տեղի է ունենում որոշակի սոցիալ-ֆիզիկական միջավայրում և միջնորդավորված է հասուլ սիմվոլներով:

Հետազոտությունը նվիրված է սուբյեկտների նկարագրությանը, նրանց փոխարարերությունների ձևերին, վարքի մոտիվներին, կոմունիկացիոն միջնորդ կոնվենցիոնալ նշաններին և արտաքին միջավայրի տարրերին և մեխանիզմներին, որոնք կարող են ազդեցություն ունենալ այդ համակարգի վրա՝ վերջինիս տարածվածությունը կրճատելու համար:


## 2.1 Կոռուպցիայի ընկալում

Կոռուպցիայի ընկալումը որակապես նկարագրելուց բացի, օգտագործելով քանակական կոնտենտ վերլուծության մեթոդը, փորձ է արվել գնահատել որոշ ուշագրավ երևույթները քանակապես՝ շիավակնելով որևէ ներկայացուցչականության:

Այսպես, հարցազրույցների և ֆոկուս խմբերի սղագրություններում հանդիպած կոռուպցիայի սահմանումները և ընկալումները կարելի է բաժանել 4 խմբի: Ըստ հաճախականության, առաջին տեղում է **կաշառակերությունը**: Դատողությունների 40 տոկոսը կոռուպցիան նույնացվում է կաշառակերության հետ: Երկրորդ տեղում **պաշտոնական դիրքի և դրա հետ կապված լիազորությունների չարաշահումն է**: Երրորդ տեղում է **ազգակցական կապերի օգտագործումը**: Չորրորդ տեղում **հովանավորչությունն է**:

Կոռուպցիայի ընկալումների հարաբերակցությունը, ըստ հարցազրույցներում և ֆոկուս խմբերում հանդիպած դատողությունների, բերվում են ստորև:

Գծապատկեր 1.



Հարցազրույցների և ֆոկուս խմբերի սղագրությունների քանակական վերլուծությունը ցույց է տալիս, որ հետազոտության մասնակիցները կրթական համակարգում կոռուպցիայի դրսնորումներից առավել հաճախ հանդիպում են կաշառակերությանը: Մոտավոր հաշվարկով հետազոտության մասնակիցների մոտ 40 տոկոսն ուսումնառության ընթացքում առնվազն մեկ անգամ հանդիպել է կաշառակերությանը: Կաշառակերությունը բուհերում և դպրոցներում բոլորը համարում են հասարակության համար առավել վտանգավոր երևույթ: Կոռուպցիայի մյուս դրսնորումները՝ պաշտոնական դիրքի չարաշահումը, հովանավորչությունը, ազգակցական կապերի օգտագործումն ունեն գրեթե նույն տոկոսային արժեքներ՝ մոտ 20-ական տոկոս յուրաքանչյուրը: Տարբեր բնագավառներ ներկայացնող հարցվողները պաշտոնական դիրքի չարաշահումը համարել են բավականաշափ վտանգավոր երևույթ: Հետազոտության մասնակիցները թեև նկատում են, որ ազգակցական կապերի օգտագործումը որոշ տարածում ունի կրթական համակարգում, սակայն դա այնքան էլ վտանգավոր երևույթ չեն համարում: Ի տարբերություն այս ամենի, հովանավորչությունը համարվում է վտանգավոր և արատավոր երևույթ: Վտանգի մեծությունը բացատրվում է նրանով, որ կրթական

համակարգում հովանավորչությունը հիմնականում ունենում է երկարատև բնույթ՝ սկսվելով հովանավորյալի՝ կրթական համակարգ մուտքից, շարունակվում է ամբողջ ուսումնառության ընթացքում:

Ընդհանուր առմամբ, եթե փորձենք տիպարանել կրթության համակարգում հետազոտության մասնակիցների հանդիպած կոռուպցիոն վարքի տեսակները կրթական համակարգի համապատասխան մակարդակներում, կարելի է ստանալ հետևյալ պատկերը:

### **Դպրոցական մակարդակ**

1. Դպրոցի ֆինանսական միջոցների ոչ նպատակային վատնում
2. Ընդունելության համար գումարների շորթում
3. Սաներին տրված դրամական պարգևների յուրացում
4. Դպրոցի կարիքների համար չարտոնված վճարումների գանձում
5. Տնօրենի, ուսմասվարի, դասղեկի և ուսուցչների համար ամանորի, ծննդյան, մարտի 8-ի և այլ իրադարձությունների կապակցությամբ գումարների հավաքագրում
6. Գնահատականների փոփոխություն
7. Գնահատականների «վաճառք» (ընթացիկ և ավարտական)
8. Մասնավոր պարապմոնքների արհեստական անհրաժեշտության ստեղծում /դասավանդող մանկավարժի հետ կամ նույն դպրոցում աշխատող այլ ուսուցչի մոտ/

### **Բարձրագույն կրթության մակարդակ**

1. Ֆակուլտետի կամ բուհի փոփոխությունը կազմակերպելու միջնորդավճար
2. Արտերկրում միջպետական պայմանագրերով ուսանելու հնարավորության տրամադրման համար ոչ արդար մրցույթի կազմակերպում և հատկացված քվոտայում ընդգրկելու համար դրամի շորթում
3. Հեռակա կրթության քողի ներքո ուսանողների ընթացիկ և ավարտական քննությունների նշանակում և ավարտական վկայականի տրամադրում կաշառքի դիմաց
4. Տեղեկատվության մատչելիության դիտավորյալ անհավասար պայմանների ապահովում
5. Տեղեկանքների, քաղվածքների և նմանատիպ այլ փաստաթղթերի տրամադրման ձգձգում՝ դրամ շորթելու նպատակով
6. Ավարտական վկայականների վաճառք
7. Պետական քննությունների արդյունքների վաճառք
8. Գնահատականների վաճառք
9. Գիտամանկավարժական գործունեության կազմակերպման համար գույքի, դիդակտիկ նյութերի և այլնի ձեռքբերման պարտադրում:
10. Մասնավոր պարապմոնքների արհեստական անհրաժեշտության ստեղծում
11. Բացակայությունների դիմաց ապօրինի ֆինանսական տույժների կիրառում
12. Սեռական ոտնձգություններ՝ որպես որևէ ծառայություն կատարելու դիմաց փոխհատուցում

## **Հետքուհական մակարդակ**

1. Ընդունելության քննությունների գնահատականների վաճառք
2. Մինիմումների գնահատականների վաճառք
3. Ավարտական աշխատանքի պաշտպանության կազմակերպում կաշառքի դիմաց

## **Կրթության և գիտության նախարարություն և տեղական տեսչությունների մակարդակ**

1. Շինարարական և մատակարարման գործարքների հետ կապված խարդախություններ
2. Հովանավորչություն՝ աշխատանքի ընդունելիս, նշանակումներ կատարելիս և առաջխաղացման հետ կապված որոշումներ կայացնելիս
3. Պետական և միջազգային կառույցների կողմից տրամադրված նյութական և ֆինանսական միջոցների յուրացում
4. Վճարների գանձում այնպիսի ծառայությունների դիմաց, որոնք պետք է անվճար տրամադրվեն
5. Հաստատումների և ստորագրությունների ձգձգում դրամ շորթելու նպատակով
6. Ենթականների հետ հանցավոր համաձայնությունների ձեռքբերում, ստուգման և գնահատման գործընթացի արդյունքների նենգափոխում
7. Ընդունելություն բակալավրիատ և ասպիրանտուրա կաշառքի դիմաց /ուղղակի և նոր ուսումնական տեղեր իշեցնելու միջոցներով/

Համեմատելով կոռուպցիան դպրոցում և բուհում կարելի է նշել մի շարք առանձնահատկություններ

1. Դպրոցում կոռուպցիոն վարքի դրսնորումն առավել հաճախ հանդիպում է 10-րդ և 8-րդ դասարաններում, երբ տեղի է ունենում ավագ և միջին դպրոցների ուսումնառության արդյունքների ամփոփումը: Ավագ դպրոցում կոռուպցիոն վարքի համար պատճառ են հանդիսանում աշակերտներից շատերի մասնավոր պարապմունքները կրկնուսույցների հետ, ինչի պատճառով ծնողները ստիպված են լինում հարթել իրենց երեխաների հաճախակի բացակայությունների խնդիրները: Բարձրագույն կրթություն ստանալիս գիտելիքի գնահատումը տեղի է ունենում ուսումնական տարվա ընթացքում 2, որոշ հաստատություններում 4 անգամ (միջանկյալ քննությունների միջոցով): Հենց գիտելիքի գնահատման ժամանակ է ակտիվանում կոռուպցիոն վարքի տարբեր դրսնորումների աճը: Այսպիսով, բուհերում, ի տարբերություն դպրոցների, կոռուպցիոն վարքի աճը և նվազումն ունի պարբերական քնույթ, որը կարելի է մոտավորապես նմանեցնել սինուսիդի:

2. Դեպքերի քանակի տեսանկյունից, դպրոցները ևս զիջում են բուհերին: Համաձայն հետազոտության տվյալների, դպրոցում կոռուպցիոն վարք դրսնորողների քանակն էապես ավելի սակավ է քան բուհերում: Դա կարելի է բացատրել նախ նրանով, որ դպրոցի մոդալ ուսանողն ավելի քիչ վճարումակ է, քան բուհի մոդալ ուսանողը, և երկրորդը, դպրոցական գնահատականը և ավարտական վկայականը, որպես

սոցիլական-մշակութային կապիտալ ավելի քիչ է կարևորվում, քան բարձրագույն կրթության առկայությունը հավաստող դիալոգը:

3. Եթե կոռուպցիոն վարքի արդյուքները պայմանականորեն վերածենք դրամի, ապա կարելի է վստահ ասել, որ դրամի շրջանառությունը բուհում ավելի մեծ է քան դպրոցում: Հիմնվելով հետազոտության արդյունքների վրա, կարելի է ասել, որ դպրոցում միջին կաշառքի, մատուցած ծառայության կամ նվերի գինը տատանվում է 10 – 35\$, իսկ բուհում գումարի շեմը, հիմնականում, չի գերազանցում 150\$: Չնայած լինում են դեպքեր, երբ կաշառքը մի քանի հազար եվրո կամ դոլար է կազմում:
4. Համեմատելով դպրոցները և բարձրագույն ուսումնական հաստատությունները կարելի է ասել, որ վերջիններում կոռուպցիոն վարքի դրսնորման ձևերը շատ ավելի բազմազան են, ինչը պայմանավորված է ներբուհական կառույցների և հարաբերությունների ավելի մեծ քանակով և կոռուպցիոն վարքի սուբյեկտների բազմազանությամբ:

Ընդհանրացնելով վերոնշվածը, կարելի է ասել, որ թեև կոռուպցիան առկա է և՝ դպրոցում, և՝ բուհում, այն էապես տարբեր դրսնորումներ է ստանում տարբեր կառույցներում: Չնայած տարբեր կենսափորձի, հասունության ու կրթվածության չափերի և մի շարք այլ գործոնների՝ շատ քերն են տարբերակում կոռուպցիան իր դրսնորումների ամբողջականության մեջ: Այս հանգամանքը կարող է լինել կոռուպցիայի հանդուժման և որոշ դեպքերում բացասաբար չվերաբերվելու պատճառներից մեկը:

## 2.2 Կոռուպցիոն վարքի կողմեր

Հետազոտությունը ցույց է տվել, որ այսօրվա ուսանողի, աշակերտի, ուսուցչի ու դասախոսի պատկերները, նրանց առօրյան և մտահոգությունները, հետաքրքրություններն ու ձգտումները Էականորեն փոխվել են և շատ տարբերվում են անցումային տարիներին առկա վիճակից, և առավել ևս, մեծ է տարբերությունը խորհրդային ժամանակաշրջանի համեմատությամբ:

Պարզվում է, որ այսօր ուսանողներն և աշակերտներն ավելի մեծ կարևորություն են տալիս գիտելիքին և տեղեկացված լինելուն քան նախկինում: Դրանից բացի, աստիճանաբար նվազում է գիտելիքի ավելորդության մասին պատկերացումը, որն անցումային տարիների զանգվածային գործազրկության արդյունքում բավականին տարածված էր: Սա շատ կարևոր և հուսադրող հանգամանք է, քանի որ կրիտիկական սահմանը հատելուց հետո անմիջապես կազմի կոռուպցիայի տարածվածության վրա:

Թե՛ կրթական ծառայություն մատուցողները և թե՛ ծառայությունների սպառողները նկատում են, որ այսօր բոլոր նրանք, ովքեր ցանկանում են ընդունվել բուհ կամ արդեն ուսանողներ են կարելի է բաժանել չորս հիմնական խմբերի՝ ըստ բարձրագույն կրթություն ստանալու դրապատճառների.

1-ին խմբին պատկանում են նրանք, ովքեր կապում են իրենց առաջխաղացումը գիտելիքի հետ: Գիտելիքի՝ որպես իմաստրումենտալ արժեքի, լնկալումն այս խմբին դասվողների մոտ առաջացնում է որոշակի կոնֆլիկտներ դասախոսական անձնակազմի հետ: Այս խմբին պատկանողները ցանկանում են ստանալ նեղ մասնագիտացում և դեմ են կամայական, իրենց կարծիքով, ոչ մասնագիտական առարկայի գետեղմանն ուսումնական ծրագրում: Կրթության ստացման նմանատիպ մոտիվացիա ունեցող անձիք ցուցաբերում են կոռուպցիոն վարք միայն ոչ մասնագիտական առարկաների վրա ժամանակ և ջանքեր չծախսելու համար՝ միևնույն ժամանակ ցուցաբերելով մեծ հետաքրքրություն այն առարկաների նկատմամբ, որոնք համարում են մասնագիտական: Հիմնականում անպետք են համարվում փիլիսոփայությունը, մարմնամարզությունը և մասնագիտության հետ անմիջական կապ չունեցող այլ առարկաները:

2-րդ խմբին պատկանում են նրանք, ովքեր չունեն հստակ նպատակ և ցանկանում են միայն բարձրագույն կրթության միջոցով ձևավորել գիտելիքների հարուստ փունջ: Նմանատիպ մոտիվացիա ունեցողների կոռուպցիոն վարքը չի կարելի բացատրել որևէ մոդելով, քանի որ այստեղ մեծ դեր են խաղում առանձին ուսանողի հակումները և նախասիրությունները: Շատ հաճախ այս խմբին պատկանողները չեն կարողանում հարմարվել բուհական կարգուկանոնին, քանի որ սովոր են անել այն ինչ իրենց հետաքրքիր է և դուրեկան: Այս պատճառով երկրորդ խմբին պատկանող ուսանողները հաճախ դիմում են կոռուպցիոն վարքի, եթե անհրաժեշտ է ընթացիկ հետևողական աշխատանք:

3-րդ խմբին պատկանում են այն ուսանողները, որոնց համար գիտելիքը որպես այդպիսին կարևոր չէ: Նրանք բարձրագույն ուսումնական հաստատություններում վճարում են «ուսանողական կյանք»: Այս մոտեցումը բավականին դիսքունկցիոնալ է, քանի որ «ուսանողական կյանքը» այս խմբի պատկերացումներում կապված է արկածախնդրության, համակարգին հակառակներու, բոլորից տարբերվելու և այլնի հետ: Այս խմբին պատկանողները մի քանի ճանապարհներ են ընտրում ուսման ընթացքում խոչընդոտները հաղթահարելու համար: Նախ, այս խմբին պատկանողները, լինելով բավականին ակտիվ իրենց խառնվածքով, հաճախ ներգրավվում են տարբեր նշանակության ներբուհական կառույցների մեջ և կատարում են որոշակի կազմակերպչական գործառույթներ ամբիոնների կամ դեկանատների համար: Այս գործոնը թույլ է տալիս նրանց խնդրել այդ կառույցների ներկայացուցիչների օժանդակությունը: Նման խնդրանքները և միջնորդությունները սովորաբար չեն մերժվում: Շանապարհներից մյուսը հանդիսանում է մեծ դժվարություններով, բայց ըստ կարգի իրենց նպատակներին հասնելը: Այս խմբին պատկանողները հիմնականում չեն դիմում կաշառքի տրման, քանի որ համարում են դա խոչընդոտների դեմ ոչ թե պայքար, այլ դրանց շրջանցում: Սակայն շատ ընդունելի են համարում հովանավորչությունը: Հովանավորչությունը շատ կարևոր է համարվում մասնավորապես այն դեպքում, եթե հովանավորողը բուհական համակարգից է: Երրորդ խմբին պատկանողների համար նման ձևով սեփական խնդիրների կարգավորումը կապվում է ստատուսի բարձրացման հետ:

4-րդ խմբին պատկանում են նրանք, ովքեր չունեն ոչ մի հստակ ակնկալիք: Այս խմբի ներկայացուցիչները հիմնականում նրանք են, ովքեր ընտրել են աշխատաշուկայում պահանջարկ չունեցող մասնագիտությունները, ընդունվել են ոչ իրենց ցանկացած ֆակուլտետը, ընդունվել են բուհ ազգականների, ծնողների հորդորով՝ «քանակից ազատվելու» կամ «զիալում ունենալու» նպատակով: Չորրորդ խմբին պատկանողներն առաջնորդվում են «ընկել եմ՝ պետք է քաշեմ» սկզբունքով և, հիմնականում, օգտվում են այն հնարավորությունից, որն առավել արդյունավետ է համարվում այդ պահին:

Վերջին երկու խմբերը հանդիսանում կոռուպցիոն վարքի հիմնական նախաձեռնողները: Երկրորդ խմբի ներկայացուցիչները հիմնականում կարողանում են խուսափել կոռուպցիոն վարքին դիմելուց ընդհանուր զարգացվածության շնորհիվ:

Ուսանողների աշքերում այսօր գրեթե բոլոր դասախոսները և ընդհանրապես պետական կառույցներում աշխատողները սահմանափակ հետաքրքրություններով ու գիտելիքներով, ինքնազարգացմանը չձգտող անձիք են: Կրթական համակարգի, մասնավորապես բարձրագույն ուսումնական հաստատությունների, սակավաթիվ աշխատակիցներին են ուսանողները համարում արհեստավարժ մասնագետներ:

Ուսանողներն և աշակերտներն առանձնացնում են մանկավարժների մի քանի տեսակ.

1. **Տարեց, դոգմատիկ մանկավարժներ** – այս խմբի աշխատանքը բուհերում բացատրվում է նրանով, որ կենսաբոշակը շատ ցածր է, իսկ դասախոսի աշխատավարձը թոշակի համեմատ

բավականին հրապուրիչ է: Այս խումբն անհամասեռ է կոռուպցիոն վարքի տեսակետից: Այստեղ հաճախ հանդիպող կոռուպցիոն վարքի մոդելներից է սեփական հեղինակության գրքերի և բրոշուրների պարտադիր վաճառքը:

**2. Երիտասարդ անփորձ մանկավարժներ** – այս խումբը հիմնականում բաղկացած է ասպիրանտներից և մագիստրոսներից, որոնք դասավանդում են, որպեսզի կատարեն ասպիրանտական ծրագրի պայմաններից մեկը կամ ընդունվել են աշխատանքի անմիջապես մագիստրատուրայից հետո: Այս խմբի ներկայացուցիչները չեն կենտրոնացնում ներկայի վրա, այլ ակնկալում են փոփոխություններ ապագայում՝ ստատուսի բարձրացում, և այդ պատճառով չեն ցանկանում պատշաճ ուշադրություն հատկացնել ուսումնական գործընթացին: Հաճախ խոչընդոտ է նաև ուսանողների և դասախոսի միջև տարիքային փոքր տարբերությունը և դասավանդման փոքր փորձը: Երբեմն այս խմբի ներկայացուցիչներն ունեն նաև այլ համեմատաբար բարձր վարձատրվող աշխատանք, ինչը խոչընդոտում է ամբողջ ուշադրությունը դասավանդման վրա կենտրոնացնելուն: Ակնհայտ է, որ այս խմբի ներկայացուցիչները պարտավորված են աշխատում բուհերում և դպրոցներում: Ցածր ստատուսի պատճառով այս խմբի ներկայացուցիչները չեն համարձակվում մտնել կոռուպցիոն հարաբերությունների մեջ իբրև լիարժեք կողմ, սակայն հաճախ կատարում են միջնորդի դեր:

**3. Միջին տարիքի «անգույն» դասախոսներ** – այս խմբի համար բուհի աշխատակից լինելու հիմնական շարժառիթը հանդիսանում է ստատուսի պահպանումը: Այս խումբը բավարարված չէ իր աշխատանքով և աշխատավարձով, սակայն չի ուզում և հաճախ չի կարող իրեն գտնել նոր իրականության մեջ, որը սկսվում է անմիջապես կրթական հաստատությունից դուրս: «Անգույն» դասախոսները հիմնականում գրադարձում են փոքր չափերի հասնող կաշառակերությամբ և ստատուսն ամրապնդելու համար ակտիվորեն խաղում են միջնորդի դեր, դրանով խսկ ամրապնդելով և լայնացնելով սեփական սոցիալական ցանցը: Բացի այդ, երրորդ խմբին պատկանողներն անպաշտպանության զգացումից դրդված հայտնվում են վերադասների կամակատարների դերում:

**4. Միջին տարիքի բանիմաց մանկավարժներ** – այս խմբի ներկայացուցիչների համար շատ կարևոր են այն ռեսուրսները, որոնք տրամադրում է բարձրագույն կրթական հաստատությունը և, որոշ դեպքերում, դպրոցը: Այդ ռեսուրսներն են ստատուսը և կաղըերի ընտրության հնարավորությունը: Քանի որ այս խմբի ներկայացուցիչները հիմնականում դպրոցից ու բուհից դուրս գրադարձում են այլ գիտամանկավարժական գործունեությամբ, որը հիմնականում ֆինանսավորվում է դրամաշնորհների միջոցով, ապա բարձր ստատուսը դարձնում է նրանց առավել մրցունակ դրամաշնորհների մրցույթներում: Մյուս կողմից, նրանք ստանում են հնարավորություն օգտվել համեմատաբար ցածր վարձատվության դիմաց աշխատել պատրաստ, երիտասարդ, մեծաքանակ աշխատումի աղբյուրից՝ իրենց ուսանողներին տարբեր աշխատանքների մեջ ներգրավելու միջոցով:

Մանկավարժներին և դասախոսներին գնահատելիս, ուսանողները և աշակերտները հիմնականում շեշտը դնում են մասնագիտական և անձնային հատկանիշների վրա: Բոլորի համար մասնագիտական որակի չափանիշ է դասավանդումից բացի այլ գիտական աշխատանքով զբաղվելը: Այս հանգամանքը կարևորվում է այն պատճառով, որ նմանատիպ դասախոսից հնարավոր է դառնում ստանալ արդիական գիտելիք և ծանոթանալ գիտության ժամանակակից վիճակին:

Կոռումպացված դասախոսների և ուսուցիչների պատկերներն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ կարելի է առանձնացնել մի քանի հավաքական պատկերներ:

**Կամակատարներ** - սրանք այն դասախոսներն ու ուսուցիչներն են, որոնք չեն հանդիսանում կոռուպցիոն վարքի նախաձեռնողները, սակայն կատարում են վերադասների պարտադրանքները: Այս տիպն առավել հաճախ հանդիպում է դպրոցում, եթք ուսուցիչը կամ դասղեկն իրենց աշխատատեղերը պահպանելու և վերադասի հետ հարաբերությունները չփշացնելու համար ենթարկվում են տնօրինության ապօրինի պահանջներին: Բուհում դրանք հանդիպում են նկարագրված դասախոսների գրեթե բոլոր տիպերում, բացառապես վերջինը:

**Ծորթողներ** – այս տիպը հավասարապես հանդիպում է թե՝ բուհում և թե՝ դպրոցում: Ծորթողները ստեղծում են այնպիսի իրավիճակներ, որոնք դառնում են անելանելի ուսանողի կամ աշակերտի համար: Պահանջը կարող է ձևակերպվել պարապմունքների մասնակցելու, գրքեր գնելու, ուղղակի գումար վճարելու և այլ տեսքերով: Այս տիպն առավել հաճախ հանդիպում է տարեց և «անգույն» մանկավարժների շրջանում:

**Վերցնողներ** – այս խմբին պատկանողները չեն պահանջում իրենց վճարել, նվերներ անել կամ նմանատիպ այլ ակնկալիքներ չունեն, սակայն առաջարկի դեպքում չեն հրաժարվում ընդունել այդ նվերները կամ գումարը: Այս խմբին պատկանող մանկավարժներին կարելի է հանդիպել բոլոր խմբերում, սակայն առավել հաճախ այս տիպը հանդիպում է «անգույն» մանկավարժների շրջանում:

**Սպիտակ օճիքներ** – այս խումբը դիտավորյալ կոչել ենք սպիտակ օճիքներ, մատնանշելու համար այն, որ խմբին պատկանողները չեն կեղտոտում իրենց ձեռքերը կաշառքներ վերցնելով: Այս խմբին են պատկանում բարձր պաշտոն զբաղեցնողները, որոնք չեն վերցնում կաշառք, սակայն չեն մերժում այլ բարձրաստիճան անձանց միջնորդությունները:

Կոռուպցիոն վարք ցուցաբերող ուսանողներին տիպաբանելը բավականին դժվար է, քանի որ իրավիճակները, որոնցում նրանք դրսերում են կոռուպցիոն վարք, բազմազան են: Հետազոտությունը թույլ է տալիս առանձնացնել՝

**Ծույլեր** - սրանք նախընտրում են վճարել կամ օգտվել որևէ մեկի հովանավորությունից: Այս վարքագիծն արագ վերածվում է մակարուծության և ուսանողը գրեթե ոչ մի քան չի կարողանում անել հիմնվելով սեփական ուժերի վրա: Նման ուսանողի մոտ առաջանում են ֆորիաներ, բացի այդ, այս խմբին պատկանողների դիրքորոշումները շատ սերտ կապված են առկա կարծրատիպերի հետ:

**Դպրոցական համակարգի զոհեր** - այս խմբին պատկանում են հիմնականում գյուղական վայրերում կրթություն ստացած ուսանողները: Դպրոցում տարբեր պատճառներով ունենալով բարձր առաջադիմություն՝ այս խմբին պատկանողները մի կողմից չեն կարողանում աղապտացվել նոր պահանջների և հարաբերությունների իրականությանը, մյուս կողմից չունեն բավարար գիտելիքներ ուսման գործընթացից ետ շմանակ համար: Այս խմբին պատկանողները մեծ դժվարությամբ են հաղթահարում առաջին ուսումնական տարին, որի ընթացքում ձեռք են բերում քույլ ուսանողի համբավ և որոշակի պաշտպանական վարքային մողելներ, որոնց մեջ է մտնում նաև կոռուպցիոն վարքը:

**Կեղծ պրազմատիկներ** - այս խմբի ուսանողներն ունենալով ապագայի մասին որոշակի պատկերացումներ՝ կատարում են ուսումնական վարքի մողելի ձևավորում և հետևողական գործում են այդ մողելի համաձայն: Վերջնակետին հասնելու ժամանակ հանդիպող բոլոր խոշընդոտները հաղթահարվում են տարբեր կերպ, որից մեկը կոռուպցիոն վարքին դիմելն է: Այս խումբը համալրվում է նաև դպրոցի աշակերտներով, ում փոխարեն լավագույն ուղին ընտրում են ծնողները, որոնք իրենց հերթին պատրաստ են վճարել, որպեսզի իրենց երեխան չծախսի ժամանակ դպրոցում, այլ օգտվի կրկնուսույցի ծառայություններից և այլն:

**Օժիտ հավաքողներ** - այս խմբին պատկանողների վարքի դրդապատճառն ատեստատ կամ դիպլոմ ստանալն է: Այս խմբին պատկանողները չեն գնահատում կրթությունն որպես ինստրումենտալ արժեք, այլ ձգտում են ձեռք բերել լոկ փաստաթուղթ, որը այս խմբի համար հանդիսանում է սոցիալական-մշակութային կապիտալ: Եթե խումբը գնում է դպրոցի ավարտական վկայականի մասին, ապա ցանկալի է, որ այն լինի բարձր գնահատականներով:

**Շուտիկներ** - այս խումբը հանդիսանում է իր ծնողների զոհը: Ծնողները, ցանկանալով զերծ պահել իրենց երեխաներին ցածր գնահատական ստանալու արդյունքում հոգեկան ապրումներից և նմանատիպ այլ երևույթներից, անընդհատ նվերներ են մատուցում դաստեկին և դասավանդող մանկավարժներին, որոշակի ապրանքներ և ծառայություններ են մատուցում ամբողջ դպրոցի կամ դասարանի համար: Հիմնականում նման վարք ունեցող ծնողներից է ձևավորվում ծնողական խորհուրդը և նմանատիպ այլ միավորումները, որոնք կոչված են ներկայացնել ծնողական համայնքը: Այս խմբի երեխաների ծնողներն են հաճախ հանդիսանում կոռուպցիոն վարքի հիմքում ընկած արժեքների ու նորմերի ստեղծողներն ու տարածողները: Այս երևույթը, առաջանալով դպրոցում, տեղափոխվում է նաև քուհ, եթե ծնողը նախընտրում է կանխավ վճարել, միայն թե իր երեխան չհայտնվի լուծարք ունեցողների ցանկում:

Նկարագրված ուսուցիչներ/դասախոսները և աշակերտ/ուսանողները մեկուսացված չեն, այլ անընդհատ փոխազդում են: Փոխազդեցության ասպեկտի ուսումնարությունը քույլ է տալիս պնդել, որ այս երկու կողմերի միջև հեռավորությունն անընդհատ մեծանում է: Այս ամենը կարելի է բացատրել վերջիններիս կողմից իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացվածության ցածր մակարդակով: Եթե փորձենք

տիպարանել այդ հարաբերությունները, ապա կկարողանանք առանձնացնել հետևյալ փոխազդեցության տեսակները՝

**Հարգանքի վրա հիմնված հարաբերություններ** – այս փոխազդեցության տիպի հիմքում ընկած է փոխադարձ հարգանքը և վստահությունը: Սա առավել հազվադեպ հանդիպող տիպն է և հիմնականում առկա է այն դեպքում, երբ դասախոսը երիտասարդ է և քաց ուսանողների հետ համագործակցելու և շփվելու առումով: Փոխազդեցության այս տեսակի ծայրահեղ դրսևորումն է հանդիսանում ընկերական հարաբերություններն ուսանողների և դասախոսի միջև, սակայն ուսանողների մեծամասնությունը խուսափում է այդ հարաբերությունները գնահատել որպես դրական և արդյունավետ: Դպրոցում աշակերտները գրեթե երբեք չեն արժանանում հարգանքի: Դպրոցում հարգանքին փոխարինում է սերը: Երբ սերը փոխարինում է հարգանքը, դպրոցը վերածվում է ոչ թե արժանիքների վրա հիմնված ինքնազնահատականով և վարքի վրա հիմնված ինքնասիրությամբ քաղաքացիների դարբնոցի, այլ ընդլայնված ընտանիքի երեխաներ կերտող կառույցի: Սերը և հարգանքն աշակերտի նկատմամբ պետք լինի համատեղված, այլ ոչ թե մեկը մյուսով փոխարինված, եթե վերջնական նպատակը լիարժեք հասարակության անդամ կերտելն է:

**Չեզոք հարաբերություններ** - այս փոխազդեցությունները սահմանափակվում են միայն լսարանային աշխատանքով՝ դասախոսություն, սեմինար, քննություն: Ուսանողների մեծ մասի հավաստմամբ այս պարագայում նրանք ձեռք են բերում չափազանց կոնկրետ և նեղ գիտելիքներ դասավանդվող առարկայի մասին, քանի որ դասախոսները չեն ստեղծում համապատասխան մթնոլորտ, կապ ուսանողների հետ՝ առարկայի մասին լրացուցիչ տեղեկություններ քննարկելու և տեղեկատվություն մատուցելու համար: Մրանք, որպես կանոն, քննորոշ են տարեց դասախոսներին, որոնց ուսանողները հաճախ համարում են դոգմատիկ: Դպրոցներում այս երևույթը հիմնականում չի հանդիպում, իսկ նման դեպքերի առկայությունը հիմնականում կապված է դպրոցում համատեղությամբ աշխատող մանկավարժների հետ, որոնք դպրոցում շատ քիչ ժամանակ են անցկացնում:

**Փողի վրա հիմնված հարաբերություններ** - սրանք այն հարաբերություններն են, որոնք կարգավորվում են հովանավորությամբ, նյութական փոխհատուցման միջոցով: Որպես կանոն, ուսման գործընթացն առևտրի և փոխանակման պրոցեսի վերածող դասախոսները չափազանց բացասաբար են ընկալվում ուսանողների և աշակերտների կողմից: Ընդ որում, աշակերտների համար նման դեպքերն առաջացնում են խորը վիրավորանք և հոգեկան տրավմա, որից երեմն հնարավոր է դառնում ազատվել միայն կրթօջախի փոփոխության միջոցով:

**Գործընկերային հարաբերություններ** – սրանք սպեցիֆիկ հարաբերությունների ձևեր են են, որոնք ձևավորվում են դասախոսի և ուսանողի համատեղ աշխատանքի ընթացքում: Այս հարաբերության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ կրթական համակարգում այս հարաբերությունները տարբերվում են դրանից դուրս հարաբերություններից: Հիմնականում դրանք դրսևորվում են “«չեզոքություն» - «հարգանք»”, “«հարգանք» – «հարգանք»” զույգերով,

սակայն երբեմն վերածվում են “«ախապերական»-«ախապերական»” զույգերի, որոնց արդյունքում դասախոսը դառնում է ուսանողի հովանավորը կրթական կառույցում:

Համաձայն ստացված արդյունքների, հիմնականում տարածված է ուսանողների/աշակերտների և ուսուցիչների/դասախոսների միջև հարաբերությունների մասին երկու կարծիք.

- ♣ Հարաբերությունները ֆորմալ են
- ♣ Հարաբերություններն ընկերական են

Նրանք, ովքեր կարծում են, որ հարաբերությունները ֆորմալ են, երկակի են ընկալում այդ փաստը □ Հետազոտվողների ճնշող մեծամասնությունը բացասաբար է վերաբերում այդ հանգամանքին և համարում, որ դասախոս-ուսանող փոխազդեցությունները պետք է վերածվեն "խորհուրդ տվող - խորհուրդ ընդունող" հարաբերությունների □ Ուսանող – դասախոս հարաբերություններում դրսևրվող ֆորմալ փոխազդեցությունները վերջիններս բացատրում են նախկին ավանդույթի շարունակվող ազդեցությամբ, իսկ որոշ դեպքերում դասախոսի մոտ մանկավարժական հմտությունների բացակայությամբ □ Հարցվողների փոքրամասնությունն է միայն կողմնակից հարաբերություններում հստակ սահմանի պահպանմանը, քանի որ վստահ չէ, որ հակառակ դեպքում դասախոսությունները չեն տապալվի:

Նրանք, ովքեր համարում են, որ հարաբերություններն ընկերական են, դրական են համարում այդ փաստը, սակայն նշում են, որ այդ հարաբերություններն իրենց մեջ թաքցնում են որոշ վտանգներ, որոնք կարող են արտահայտվել և □ ուսանողների, և □ դասախոսների կողմից իրենց դերերը գերազնահատելու արդյունքում □

Հարցվողների հավաստմամբ ուսանող-դասախոս փոխազդեցության ընթացքում տարածայնությունները հիմնականում լինում են որոշակի գիտական հարցերի և ոչ օբյեկտիվ գնահատականների վերաբերյալ □ Նմանատիպ տարածայնություններն ու կոնֆլիկտները հաղթահարվում են մի դեպքում՝ կաշառքի կամ ծանոթ միջնորդների ներգրավմամբ /այս պարագայում կաշառքը և □ գնահատականի, և □ հարաբերությունների կարգավորման գինն է/, այլ դեպքերում մնում են չհարթված և երբեմն ստանում են լատենտ բնույթ □ Ուսանողների հավաստմամբ ակնկալվող աջակցության ստացման անվստահության պատճառով իրենք հաճախ խուսափում են դեկանատի օգնությանը դիմելուց □

Դասախոսների հետ անցկացված խորին հարցազրույցների արդյունքները վկայում են, որ վերջիններս ուսանող-դասախոս փոխհարաբերությունների հիմքում դնում են փոխադարձ հարգանքի գիտակցումը □ Կա կարծիք, որ այդ հարաբերությունները պետք է նվազագույն չափով հեռացված լինեն, իսկ մեկ այլ մոտեցմամբ՝ ընդհակառակը, միջանձնային հարաբերությունները պետք է հասցեն նվազագույնի, ինչպես դասախոսներն իրենք են ասում. «ուզում ենք լինել գիտելիք տվողներ, այլ ոչ թե դաստիարակներ» □ Որպես կանոն, առաջին կարծիքը կիսողներն առավելապես երիտասարդ սերնդի ներկայացուցիչներն են,

որոնք հավակնում են լինել ավագ ընկեր-դասախոս ուսանողների համար, մինչդեռ ավագ սերնդի դասախոսների և ուսանողների միջև սոցիալական տարածությունն ավելի մեծ է, և այստեղ երկուստեք դեր են խաղում թե՝ տարիքը և թե՝ գիտական կարգավիճակը։ Դասախոսների մի զգալի մասի հավաստմամբ էլ այդ փոխարարելություններն ու փոխագդեցությունները նախևառաջ պետք է կառուցվեն ուսումնական գործընթացի և դասախոսի կողմից ուսանողին գիտելիքի, փորձի ու հմտությունների փոխանցման գործընթացի արդյունավետության մեծացման քայլերի հաշվարկմամբ։

### **Ուսանող/աշակերտ - աղմինիստրացիա փոխագդեցություններ**

Որպես կանոն, բուհի և դպրոցի աղմինիստրացիան դիտվում է որպես ուսումնական գործընթացը կարգավորող և համակարգող օղակ, որը պատասխանատու է ներքուիական սոցիալ-կազմակերպչական և իրավական բնույթի մի շարք հարցերի կարգավորման, ինչպես նաև ուսումնական գործընթացի շրջանակներում ծագած խնդիրների լուծման համար։ Սակայն հետազոտության արդյունքները վկայում են, որ, հակառակ դրան, ուսանողների և աշակերտների կողմից աղմինիստրացիայի գործունեությունը չի ընկալվում ներքուիական և ներդպրոցային խնդիրների ու հարցերի կարգավորման նշված համատեքստում, ինչը վերջիններիս մոտ մի տեսակ զգուշավոր ու խուսափողական վերաբերմունք է առաջացնում աղմինիստրացիայի նկատմամբ։ Ուսանողների և աշակերտների զգալի մասը գրեթե համոզված է, որ իրենց կողմից ներկայացվող հարցերը դժվար թե արձագանք ու անաշառ լուծում ստանան աղմինիստրացիայի կողմից։ Իհարկե, այստեղ նույնպես, ինչպես կարծում են հարցվողները, (ինչպես, թերևս, ամենուր) մեծ նշանակություն ունեն ոչ ֆորմալ կապերն ու հարաբերություններն աղմինիստրացիայի առանձին ներկայացուցիչների հետ։ Սակայն, ընդհանուր առմամբ, ուսանողների մոտ ընդգծված կերպով նկատվում է աղմինիստրացիայի հետ շփումից և փոխագդեցություններից խուսափման միտում։


Հարցվողների հավաստմամբ աղմինիստրացիայի և ուսանողների կապը սահմանափակվում է առավելապես դեկանատի հետ շփումներով, որոնք սակայն կանոնավոր բնույթ չեն կրում։ Դպրոցում այդ հնարավորությունը գրեթե խսպառ բացակայում է։ Ոմանք նշում են դեկանատի աշխատակիցների հետ ունեցած բարեկամական, մյուսները՝ թշնամական հարաբերությունների վերաբերյալ, սակայն ընդհանուր միտումների մասին միանշանակ խոսել հնարավոր չեն։ Այդ հարաբերությունները կտրուկ տարբերվում են նաև ֆակուլտետից կախված։ Եթի մի ֆակուլտետում նշում են, «վախում ենք դեկանի աշքին երևանը, ուր մնաց իրեն հարցով դիմենք», ապա մի այլ ֆակուլտետում, «կամայական հարցի դեպքում զնում ենք դեկանատ խորհուրդ վերցնելու համար, դեկանին միշտ գրավոր դիմում ենք. ինքը միշտ մեզ աջակցում է»։ Ինչևէ, հարցվողները համարում են, որ դեկանատի հիմնական գործառույթներից մեկը մեղիացիան պետք է լինի, ընդ որում պետք է պատիժ կրի տարածայնության մասնակից մեղավոր կողմը, անկախ նրանից, ուս ուսանողն է, թե դասախոս։

## Ուսանող-ուսանող աշակերտ-աշակերտ փոխազդեցությունները

Ուսանողների և աշակերտների միջև հարաբերությունները ընդհանուր առմամբ համարվում են բարեհամբույր, ընկերական, երբեմն մրցակցային՝ Ուսանողների և աշակերտների միջև հարաբերությունները սրվում են այն դեպքում, եթե մրցակցության ժամանակ ինչ-որ մեկը դիմում է անազնիվ միջոցների՝ Այս ամենը, ինչ խոսք, բացասաբար է անդրադառնում մրցակցության ոգու վրա՝ տարածայնություններ ու լարվածություն մտցնելով ուսանողների հետագա փոխազդեցությունների մեջ՝ Աշակերտների մոտ, որոնք շատ հարցերում, մասնավորապես հոգեբանական պաշտպանվածության պարագայում, ավելի խոցելի են, առաջանում են լուրջ հոգեբանական խնդիրներ: Այդ խնդիրներն երբեմն լուծվում են միայն դպրոցի փոփոխության միջոցով:

Նկարագրված բազմաբնույթ հարաբերություններից որոշները հիմք են հանդիսանում կոռուպցիոն վարքի դրսևորման համար: Հարցազրույցների և ֆոկուս խմբերի սղագրությունների հիման վրա փորձ է արվել կառուցել այդ հարաբերությունների գծապատկերները.

Գծապատկեր 2.



Զախ գծապատկերն արտացոլում է կոռուպցիոն վարքը բուհում, իսկ աջը՝ դպրոցում: Գծապատկերից երևում է, որ առկա են 2 կոռուպցիոն վարք ցուցաբերողներ և ամեն կողմից համար նախընտրելի միջնորդներ: Այն պատճառով, որ հիմնականում կոռուպցիայի տակ բոլորը հասկանում են կաշառակերությունը, մենք փորձում ենք բացատրել հենց այդ երևույթը և կողմերը պայմանականորեն կոչում ենք “ուսանող” և “դասախոս”: Այս պայմանական անունների կիրառությունը չի նշանակում, որ ուրիշ կողմերի ներգրավման դեպքում այս գծապատկերները ճիշտ չեն:

Ենթադրենք, որ առաջին դեպքում կոռուպցիոն վարքի նախաձեռնողն ուսանողն է: Նրա կոռուպցիոն վարքի մեխանիզմները սահմանափակվում են 2 տարբերակներով: Առաջին տարբերակի համաձայն, ուսանողն անմիջապես դիմում է դասախոսին առաջարկելով որոշակի

ապրանք կամ ծառայություն դասախոսի որևէ գործողության կամ անգործության դիմաց: Այս տարրերակն ունի իր դրական և բացասական կողմերը:

- |  |  |
|--|--|
| <p><b>Դրական կողմեր</b></p> <ul style="list-style-type: none"><li>♣ Վստահություն, որ ծառայությունը կամ ապրանքը փոխանցվել է</li><li>♣ Վստահություն, որ դասախոսը նրան հիշել է, և ոչ մի թյուրիմացություն տեղի չի ունենա</li><li>♣ Միջնորդավճարի բացակայությունը</li><li>♣ Սակարկելու հնարավորությունը</li><li>♣ հեղինակության ձեռքբերումը</li></ul> | <p><b>Բացասական կողմեր</b></p> <ul style="list-style-type: none"><li>♣ Ճախողում դասախոսի վարքը սխալ կանխատեսելու արդյունքում</li><li>♣ Ճախողում կոռուպցիայի մշակույթին կոնվենցիոնալ արտահայտություններին չտիրապետելու արդյունքում</li><li>♣ հեղինակության կորուստ և, միզուցե, լրացուցիչ խնդիրների ձեռքբերում</li><li>♣ Միջնորդավճարի առկայությունը</li><li>♣ թյուրիմացությունների հնարավորությունը</li></ul> |
|--|--|

Հիմնականում, բացասական կողմերն ավելի ծանրակշիռ են համարվում և, եթե ուսանողը չունի ստույգ տեղեկատվություն սակագնի և կոնվենցիոնալ արտահայտությունների մասին, ապա նա չի համարձակվում գնալ նման քայլի:

Երկրորդ դեպքում, ուսանողը գործում է միջնորդի օգնությամբ: Միջնորդ կարող է լինել համակարգի ներսից կամ նրանից դուրս: Համակարգից ներս, սովորաբար, միջնորդի ծառայություններ են մատուցում բարձր կորսեցիները, լաբորանտները, ասպիրանտները, կադրերի բաժնի և հաշվապահության աշխատակիցները, գրադարանավարները, բոլոր նրանք, ում դասախոսը ճանաչում է անձամբ և/կամ ում հետ դասախոսին ձեռնտու է փոխադարձ պարտավորվածության հարաբերություն ստեղծել: Համակարգի ներսից յուրահատուկ միջնորդ է ավագը, լաբորանտները և ամբիոնի վարիչները: Այս միջնորդները տարրերվում են մյուսներից նրանով, որ տեղեկատվական խողովակ են հանդիսանում և՝ դասախոսի և՝ ուսանողի համար:

Երկրորդ տարրերակը շատ ավելի շահավետ է ուսանողի համար, քանի որ նա նախ մնում է անանուն, անգամ, եթե դասախոսը մերժի գործարքը, նրան դժվար կլինի հասկանալ թե ու՞ն համար են փորձել բանակցել իր հետ: Մյուս կողմից, միջնորդը և դասախոսը, անձամբ իրար ճանաչելով, չեն խուսափի փոխահավետ գործարքից, քանի որ չկա մատնված լինելու վտանգը:

Ուսանողը կարող է նաև դիմել համակարգից դուրս գտնվող միջնորդի օգնության: Համակարգից դուրս միջնորդները սովորաբար, առաջնային սոցիալական շրջապատի անդամներն են:

Ուշագրավ է այն, որ անգամ այս հարցում գոյություն ունի մասնագիտական համերաշխություն: Միջնորդը լինելով այլ բուհի դասախոս կամ դպրոցի ուսուցիչ, կարող է բանակցելու միջոցով անգամ խնդիրը հարթի առանց ծառայության կամ ապրանքի փոխանցման:

Գծապատկերը չբարդացնելու համար չենք նշել այն դեպքերը, երբ գործընթացում ներգրավված են մի քանի միջնորդ: Սովորաբար մի քանի միջնորդներ են ներգրավված լինում

այն դեպքերում, երբ առաջին միջնորդն ունի անհամեմատ ավելի բարձր կարգավիճակ, քան դասախոսը: Օրինակ՝ կարող է X ֆակուլտետի գործավարը դիմել Y ֆակուլտետի դասախոսին X ֆակուլտետի դեկանի խնդրանքը փոխանցելու համար: Որքանով թույլ տվեց պարզել անցկացված հետազոտությունը 2 կամ ավելի միջնորդ ներգրավում են կոռուպցիոն փոխարարերության մեջ դեկանի և ավելի բարձր պաշտոն ունենալու դեպքում: Օրինակ՝ ԱԺ պատգամավորը զանգահարում է պոռեկտորին, որն իր գործավարին ուղարկում է ամբիոնի վարիչի մոտ՝ դասախոսին համապատասխան կարգադրություն տալու նպատակով:

Երբեմն միջնորդի դեր են խաղում կրկնուսույցները, որոնց մոտ բուհ ընդունվելու համար պարապում էր ուսանողը, եթե նրանք դասավանդում են բուհում և ճանաչում դասախոսին:

Մյուս կողմից, երբ կոռուպցիոն վարքի նախաձեռնողը դասախոսն է, նա կարող է գործել ուղղակիորեն կամ կարող է օգտագործել միջնորդին: Սովորաբար, դասախոսներն որպես միջնորդ օգտագործում են ավագներին, որոնց միջոցով ամբողջ կուրսին իրազեկում են իրենց ակնկալիքների վերաբերյալ: Երբեմն, այդ դերը կատարում են գործավարները: Կոռուպցիոն վարք ցուցաբերող դասախոսը կարող չմտնել ուղղակի հարաբերության մեջ ոչ ուսանողի և ոչ էլ միջնորդի հետ: Նրա ակնկալիքների մասին իրազեկումը տեղի է ունենում ուսանողների սոցիալիզացիայի ժամանակ, երբ գլխավոր ագենտները բարձր կուրսերի ուսանողներն են: Բարձր կուրսի ուսանողները պատմելով իրենց արկածները, զվարճալի դեպքերը և այն ամենը, ինչը կարելի է կոչել ուսանողական ֆոլկլոր՝ առաջարկում են վարքի գործուն մոդելներ, որոնք հաճախ վերաբերություն են ցածր կուրսերի ուսանողների կողմից: Այդ տեղեկատվությունը սկզբից փոխանցվում է տղաներին, ապա աղջիկներին, այն էլ այն դեպքում, եթե աղջիկն ունենում է խնդիր և սկսում է հետաքրքրվել: Ուշագրավ է նաև, որ աղջիկները շատ հազվադեպ են հանդես գալիս որպես կոռուպցիոն վարքի անմիջական կողմ, նրանց փոխարեն խնդիրները հարթում են նրանց ընկերները, եղբայրները, ծնողները: Կարելի է ասել, հայկական մշակույթում կոռուպցիոն վարք ցուցաբերելու իրավունքը պատկանում է տղաներին:

Դպրոցում հարաբերությունները սակավ բազմազան են: Աշակերտը դպրոցում գրեթե երբեք չի հանդիսանում կոռուպցիոն վարքի նախաձեռնող ինքնուրույն կողմ: Նա կարող է փոխանցել ուսուցչին նվեր, որի փոխանցման մասին նախապես պայմանավորվել էին իր ծնողները: Ինչպես և առաջին դեպքում, ծնողը կարող է անմիջապես բանակցել ուսուցչի հետ, բայց դեպքերի ճնշող մեծամասնությունը թույլ է տալիս պնդել, որ ծնողները խորհրդակցում են կամ իրենց երեխայի համադասարանցու ծնողի հետ, որը ծնողական համայնքի առավել ակտիվ անդամն է կամ դասղեկի հետ: Այս երկու միջնորդներն ապահովում են երկկողմանի կապ ուսուցչի և ծնողի միջև:

Կառուցված հարաբերությունների գծապատկերները ճիշտ են ոչ միայն ուսանող-դասախոս և աշակերտ-ուսուցիչ այլ նաև մի շարք այլ հարաբերությունների համար, որտեղ կողմներից մեկը կրթական ծառայությունների ուղղակի կամ միջնորդված սպառողն է:

## 2.3 Կոռուպցիոն վարքին դիմելու պատճառները

Ֆոկուս խմբերի արդյունքները ցույց տվեցին, որ կոռուպցիոն վարքի լայն տարածվածությունը կրթություն ստանալու գործընթացում ինհիբիտորի դեր է կատարում: Կոռուպցիոն փոխհարաբերության մաս դառնալու պատճառները հիմնականում մի քանիսն են:

### 1. Անարդար վերաբերմունքից պաշտպանություն

Ապօրինության միջոցով ապօրինությունից պաշտպանվելը, համակարգի որևէ մաս իր պարտականությունները կատարելու համար փոքրիկ նվերներ անելը բավական հաճախ հանդիպող կոռուպցիոն վարքի դիմելու պատճառներից են:

«...իմ հետ էլ է մման բան եղել: Ծանոթությունը և կոռուպցիան կարող ենք դիտարկել որպես ապահովագրական գոտի: Դու իմ՝որ բան անում ես, բայց արդյունքների համար համոզված չես, որովհետև միայն քեզանից չի կախված թե ոնց կլինի, և այդ ամեն իմը գուզահեռ է. մի կողմից դու ֆորմալ ձևով ես գործում, մյուս կողմից էլ դու օգտագործում ես քո ոչ ֆորմալ հնարավորությունները և իմ մոտ շատ հաճախ հենց դա է եղել, ապահովության համար, եթե կա 2 ճանապարհ, 2 ռեսուրսներն էլ օգտագործում եմ...»

հատված ասպիրանտների հետ անցկալած ֆոկուս խմբից

«...ասպիրանտուրա ընդունվելու համար անգերենի քննություն պետք է հանձնեի ...ինքս ինձ վրա վստահ էի ... ամեն իմից բացի 1 տարի Հայաստանի Ամերիկյան Համալսարանում եմ սովորել, բայց ինձ այնքան վսիսեցրեցին, որ ես որոշեցի մի ձևական նվեր ամեն օտար լեզվի ամրիոնի վարիչին, մենակ նրա համար, որ արհեստական խոշնդրությունը չստեղծեն, իսկ քննությունը ես ինքս հանգիստ կհանձնեի ... հաշվի առնելով, որ ես մրցակից չունեի, կարծում էի, որ մի 50\$ նվերն ավելի քան բավական է - ոչ մի ապօրինի բան չէի ուզում որ ամենին, ընդհակառակը ուզում է փող տալ, որ ինձ հետ օրենքով վարվեն ... հետաքրքրվեցի ու իմացա, որ անկախ ամեն իմից այդ քննության գինը 350\$ ... որոշեցի ոչ մի կոպեկ էլ դրամց չտալ...»

հատված ասպիրանտների հետ անցկալած ֆոկուս խմբից

### 2. Անհրաժեշտ փաստաթղթի ստացում կամ աշխատանքի կատարում կարճ ժամանակում

Հաճախ բարձրագույն կրթություն ստացած անձանց և ավարտական կուրսերի ուսանողներին տարբեր կրթական, դրամաշնորհային և այլ նպատակների համար անհրաժեշտ է լինում մի քանի օրվա ընթացքում ստանալ տեղեկանքներ, հաստատել փաստաթղթեր և այլն: Երբեմն որոշ անշան գործընթացների կազմակերպումից է կախված ֆակուլտետների բնականոն գործունեությունը կամ գիտական աշխատանքների հաջողությունը: Գիտակրթական գործընթացը սպասարկող համակարգի թերի, ոչ արդյունավետ կազմակերպումը թերում է կոռուպցիայի:

«...միջանկյալի տեսրերը կամ մի ուրիշ քան տպարանից պետք է վերցնեմ, կամ պետք է սպասեմ, որ իրենք բերեն, կամ պետք է ուսանող ուղարկեմ, որ իրենք բերեն... եթե սպասեմ Աստված զիտի, երբ կրերեն, եթե ուսանող եմ ուղարկում հետները մի հաս պլիտկա կամ բռնըրոներկա եմ ուղարկում, որ լավ տպավաճները, ուղիղ կտրածները, նորմալ կարվածները տան ...սա կոռուպցիա է, նա ինչ է ...ինչո՞ւ պետք է ինձ կանոնակարգով հասնող նյութերը ստանալու համար ես անհանգստանամ էլ չեմ ասում ինչ-որ քան տամ...»

հատված դասախոսների հետ անցկացված խորիմ հարցազրույցներից

«...դիպում մենակ 2 շաբաթը 1 ամգամ կարաս գնաս ստանաս: Եթե առավոտյամ 10 չես գալիս մունաք եմ գալիս ... ու հետո սկսում եմ. «իմստիտուտը այրծաք մի հաս մաղարիչ չեք ուզում անեք, գոնե մի հաս բռնըրոներկա բերեք»: Իմ մոտ այնպիսի տպապվորություն է, որ այդ բյուրակրատներին թվում է որ մենք ենք ստեղծված իրենց նվերներ տալու համար, այլ ոչ թե իրենք՝ մեզ սպասարկելու համար: Հենց այդ դրվագքից է կոռուպցիան առաջանում, ոչ մեկը իր տեղը չգիտի, իսկ դեկավարությունը դրանցից չի ձեռքազատվում, որեմն ձեռնտու է դեկավարներին նման անձանց աշխատանքով ապահովելու ...»

հատված մագիստրատուրայի ուսանողների հետ անցկացված ֆոկուս խմբից

### 3. Գնահատականի ստացում կամ բարձրացում

Դպրոցում և բուհում շատերը պատրաստ են գնել և վաճառել գնահատականներ, ատեսատաներ և վկայականներ, սակայն երբեմն գնահատականի գնման առաջարկով հանդես են գալիս կրթական ծառայությունների սպառողները, երբեմն նրանց առաջարկում կամ պարտադրում են գնել գնահատական:

«... մի ժողովում դասարանցի ունեինք, որ միշտ 2 էր ստանում ամեն կիսամյակի վերջում իրա ծմողները գալիս էին դաստեկին խնդրելու ... մի օր ինքը դասը նորից վաստ է սովորում, քայց դասատուն նրան 4 դրեց ... իսկ ես 2 սխալ արեցի ինձ էլ 4 դրեց: Եթե ես չիմանայի, որ իրա մասման գալիսա ու դաստեկին միշտ նվերներա անում, ես դա կիսականայի ... դասատուն ուզում է նրան ոգևորել, որ լավ սովորի, քայց ամբողջ դասարանը գիտի թե ինքը ինչո՞ւ 4 ստացավ ու դա իմ համար վիրավորական է ու ... ընդհանրապես ... սխալ է: Հիմա ինքը ինձանից լավ գնահատականներ ունի ու եթե այնպես ստացվի, որ ես ու ինքը մի տեղի հավակնենք ինքը կանցնի, իսկ ես՝ ոչ:»

հատված ավագ դպրոցի աշակերտների հետ անցկացված ֆոկուս խմբից

«...Ես քննությունը պետք է մենակ մաթեմով անցնեի և ես համոզված եկա, որ բարձր ես ստացել, քայց տեսա, որ 13 է, ես դասախոսի կրկնուսույցին - Բ.Հ./ասեցի, որ զա, քայց ինքն ասեց, որ մեկ է չիմ բարձրացնելու, քայց ես գնացի ու ինձ հանձնաժողովի դասախոսը կանչեց ու հարցրեց, թե մեղալի քննությանը փող չեմ տվել ու երբ իմացավ, որ ոչ՝ ասեց. «դե թեր 5000\$ տուր ու մենք կրարձրացնենք ու դու կընդունվես», իսկ ես էլ ասեցի. «հենա կգնամ տուն կառնեմ»

հատված բակալավրիստի ուսանողների հետ անցկացված ֆոկուս խմբից

#### **4. Արտոնության ստացում**

Սիջպետական համաձայնագրերը, դրամաշնորհները, բարերարները, խոշոր գործատունները և մի շարք այլ սուբյեկտներ հնարավորություններ են ընձեռում լավագույն ուսանողների համար արտերկրում կամ Հայաստանում վերապատրաստվել և կայանալ որպես մասնագետ: Կան նաև բազմաթիվ այլ խնդիրներ, օրինակ դասացուցակի կազման ժամանակ դասախոսի ցանկությունը հնարավորինի չափ հաշվի առնել, ծանրաբեռնվածությունների բաշխում, դասարանի տրամադրում և այլն: Այդ ամենը միշտ չէ որ կատարվում է արդար և հոգուտ ընդհանուր գործի հաջողության:

«...Ես կարծում եմ, որ եթե ես 4 տարի լավ սովորել եմ, բայց այդ ոլորտի առաջատար հիմնարկություն պրակտիկայի ուղարկում եմ դեկանի ծանոթին, էմ էլ նրա համար եմ ուղարկում, որ իրանց տաճը մոտիկ լինի .... իսկ իմ համար դա մի գուցե ապագա աշխատավայրը կարող էր լինել ... ինձ ուղարկում եմ մի հատ սկետական հիմնարկ, որտեղ ոչ մի նորմալ մասնագետ չկա, բոլորը ոչ կարող են, ոչ էլ ուզում են աշխատել ... ինչին էր պետք իմ սովորելը: Ես այդքան ժամանակ և միջոցներ ծախսեմ, որ գործատուի աշքին կարողանամ բարձր երևալ, իսկ արդյունքում ես անզամ գործատուի մոտ չեմ հայտնվում, որ մնաց առիք ստանամ ինձ ցույց տալու համար ... »

*հատված բակալավրիատի ուսանողների հետ անցկացված ֆոկուս խմբից*

« ... Ես գիտությունների թեկնածու մարդ եմ, հողվածներիս հաշվից ըմկել եմ և այլն և այլն, բայց դպրոցում, որտեղ մի քանի դասաժամ ունեմ, ստիպված եմ մանկավարժականը երեքներով ավարտածին հանդուրժել և ժպտալ, որ հանկարծ իմ դասերը համալսարանի դասերի նույն օրը չգցի: Մի անզամ հետը վիճեցի մի - կիսամյակ տանջվեցի ... տնօրենի մոտ հարցը բարձրացրեցի, ասեց. «Քեռուս աղջկնա, ոնց արելա տենց էլ ճիշտ է» ... դուրս գամ չի լինի, մնամ այդ օճանոցում չի լինի մեկը մեկին ծանոթ բարեկամա, ո՞վ ու՞ն դեմ կզնա ... »

*հատված դասախոսի հետ խորին հարցազրույցից*

#### **5. Ընդհանուրի մաս դառնալու ցանկություն**

Չատ հաճախ կոռուպցիոն վարքի մեջ ներգրավվելը մնացածներից չտարբերվելու համար է արվում: Պարզվում է, որ որոշ տեղերում կոռումպացվածությունը խմբային պատկանելիության հատկանիշներից է: Ընդ որում, կա առնվազն 2 խումբ՝ “վերցնողների” և “չվերցնողների”: Անկախ նրանից թե՝ “վերցնողին” “չվերցնողի” հետ են շփորել թե՝ հակառակը, բոլորի համար դա շատ տիած է:

«... բոլորը վերցնում են, դու չվերցնես կասեմ կամ էշա, կամ փողին փող չի ասում ... դե պարզ է, որ եթե մի քանի տարի աշխատել ես մի կոլեկտիվում ... ապա առաջանում է երրորդ հիպորեզը՝ էշ չի ... միլիոնատեր չի...ուրեմն վեկալումա մեր հետ էլ չի կիսվում ... դա էլ ուրիշ պրորեմ է ...»

*հատված դասախոսների հետ անցկացված խորին հարցազրույցներից*

«... որոշ տականքներ իրենց քոյլ են տալիս սերունդն այլասերել, ձևավորել մի մտածելակերպ, որի համաձայն «զերցնող չկա՝ դժվար համոզվող կա», ինչի արդյունքում ուսանողները, կարծում են, նաև շատ դպրոցներում աշակերտները իրենց ուզածի պես են վերաբերվում կրթական գործընթացին՝ վիրավորելով և դասախոսի ինքնասիրությունը և խանգարելով մյուսներին ... իսկ ոչ նման մտածելակերպ սերմանողները ոչ էլ այդ սկզբունքին հետևողները չեն պատճենում ....»

հատված բուհի դասախոսի հետ անցկացված խորք հարցազրույցից

## 6. Պաշտպանված չինելը

Իրենց քոյն պարտականությունները չիրականացնող արհմիությունների և ուսանողական խորհուրդների երկարատև անգործության արդյունքում, բոլոր դարձել են անպաշտպան և վտանգավոր միմյանց համար: Նկարագրված իրավիճակը ստիպում է շատերին հանդուրժել կոռուպցիան, որովհետև բացակայում են գործուն միջոցներ և մեխանիզմներ, որոնցով կարելի է պաշտպանվել:

«...ամեն անգամ հաշվապահությունից փող ստանալու մի 200-300 դրամ թողնում եմ, ինձ ոչ մեկը չի ստիպում, բայց եթե չքողնեմ համապատասխան անքարյացակաս վերաբերմունքի կարծանանամ, իսկ ինձ համար ավելի լավ է այդ 300 դրամը չունենամ, քան ամեն անգամ դժգոհ հայացք հանդիպեմ և արհեստական խոչընդոտներ հարթեմ: Իսկ ընդհանրապես, ավելի լավ է, որ իմ աշխատավարձը բանկային հաշվի վրա փոխանցեմ - և համակարգն ավելի քափանցիկ կդառնա, և ստիպված չեմ լինի հերթ կանգնել և շատ այլ հարցեր կլուծվեին...»

հատված դասախոսների հետ անցկացված խորին հարցազրույցներից

«... իիմա, եթե ինձ մեկը զանգի ասի. « ինչ կլինի, այսինչին նշանակի» անունը ի՞նչ դնեմ չնշանակեմ ... ասեմ չի սովորում, դասերիս չի բարեհանում զալ, կասեմ. «դե իիմա տղայա կամ դժվար դրության մեջ է ընտանիքը, ես ծնողների հետ խոսել եմ իրենք կիետևեմ ... այլս չի կրկնվի» մի օրենք չկա, մի մեխանիզմ չկա, որ մենք մեզ պաշտպանենք ...քա էլ չեմ ասում, որ դեկամն ասի դիր մեջ ոչ ասիստենտ կդառնամ, ոչ կպաշտպանվեմ, ոչ էլ կաշխատեմ ... »

հատված դասախոսների հետ անցկացված խորին հարցազրույցներից

## 7. Տեղեկացված չինելը

Արագ և կամային փոփոխությունները, որոնց հասարակ սպառողը չի կարող հետևել և որսալ նորությունները, համակարգերի ոչ բափանցիկ լինելը, սեփական իրավունքների չիմացությունը և ընդհանրապես հատուկ և ընդհանուր տեղեկատվության սակավությունը մերենայացումների և մանիպուլացիների հիմքեր են ստեղծում:

«...իմ եղրոր դեպքում, որը հանրապետական աշխարհազրության օլիմպիադայում 2-րդ տեղն էր գրավել, մա ինքը իր ուժերով կարող էր մաքենատիկայից 5 ստանալ, բայց տնօրենը իրան կանչեց ասեց. «Տիգրան ջան, գիտենք որ կարող ես, բայց 50\$ պետք է

տոսա, եթե չես ուզում բուհում պրոբլեմներ ունենաս ...քողորք տեսնց են անում», քանի որ այդ գնահատականն ատեսատից պետք է գնա բուհ... »

*հատված բակալավրիատի ուսանողների հետ անցկացված ֆոկուս խմբից*

«...գալիս ես դեկանատ, որ անցյալ տարի քեզ տրված դիալուսի պատճեի վրա կմիք դմեն, այսի կամ մի հատ բոմբոներկա գործավարին նվիրես կամ էլ մտնես դեկանի մոտ խնդրես աղերսես, եթե ուզենա կկնքի, եթե տրամադրությունը վաստ լինի՝ չի կմքի... չես հասկանում, եթե ինձ օրենքով հասնում է քող առանց նվերի անեն, եթե չի հասնում քող հստակ ասեն որ միանգամից նոտարի մոտ գնանք ...»

*հատված ասպիրանտների հետ անցկացված ֆոկուս խմբից*

## **8. Ֆինանսական դրույթյանը բարելավելու ցանկությունը**

Դասախոսների և ուսուցիչների ցածր աշխատավարձը համարվում է կոռուպցիայի պատճառներից ամենահիմնականը: Սակայն հետազոտության մասնակիցներից գրեթե բոլորը մտաքերեցին դեպքեր, երբ միայն աշխատավարձով ապրող դասախոսը հրաժարվել է կաշառը վերցնելուց, իսկ բարձր եկամուտ ունեցողներն ամեն սկիսամյակի վերջում բազմապատկում են իրենց կարողությունները:

«... չեմ մեղադրում, քող վերցմեն այդ կաշառը տվողից, բայց չպահանջեն քողորից ... ես ել եմ մանկավարժ եղել դպրոցում զիտեմ ինչ է ուսուցչի աշխատավարձը, բախտս բերեց իիմա մնասնավոր թարգմանություններով եմ զբաղվում ու այդ ողորմության մասին աստիճանաբար մոռանում եմ...»

*հատված ծնողների հետ ֆոկուս խմբից*

«...ֆակուլտետ կա՝ վերջում մի քանի հոգի ջակեր են առնում, ֆակուլտետ էլ կա՝ մարդիկ հոսանքի փող են հանում... տարրեր երևոյթների հետ գործ ունենք, բայց բոլոր դեպքերում ես որպես աշխատող կարող եմ ասել, եթե ուրիշ աշխատանք չկա, մենակ դաս տալն է, ուզում է դպրոց լինի, ուզում է ակադեմիա հնարավոր չի տուն պահել ... հենց դրա համար էլ միայն կանայք են աշխատում: Առաջ գոնե կարևոր էր, որ կինը տունը չմնա ու եթե կարող է մի քանի կոպեկ էլ աշխատի, իիմա էլ կոպեկները այնքան չեն համապատասխանում շուկայական գների, որ դեռ հարց է դու ստանում ես աշխատելու համար, թե վճարում: Այս պատճառով ես կաշառը վերցնողներին հասկանում, բայց իրենց արարքը բացասական գնահատում: Ավելի լավ է, քող աշխատանքի չգնան, մի տարի երեխաները դպրոց չգնան, բայց կառավարությունը հասկանա, որ տեսնց գնով հնարավոր չի ուսում տալ ...»

*հատված դասախոսների հետ անցկացված խորին հարցազրույցներից*

Ուսումնասիրելով հիմնական դրդապատճառները, որոնք ստիպում են կրթական ծառայությունների սպառողին և մատուցողին ներքաշվել կոռուպցիոն վարքի մեջ, հնարավոր

դարձավ կառուցել 2 տեսական մոդել, որով կարելի է բացատրել կոռուպցիոն վարքի որոշ առանձնահատկություններ:

## **1. Մոդել - կոռուպցիան «ընտրություն - նշանակում» տիրույթում**

Հետազոտության մասնակիցները, նկարագրելով կոռուպցիոն վարքի մոտիվները, բնութագրում էին նաև կոռուպցիոն վարքի նախաձեռնող կողմերին: Այդ բնութագրություններն ամբողջացնելով՝ հմարավոր դարձավ դուրս բերել կոռուպցիոն վարքի մի մոդել, որում կոռուպցիոն վարքը կախվածության մեջ է հեղինակության գործոնից: Այս մոդելը մենք դիտարկել ենք «ընտրություն - նշանակում» տիրույթում այն պատճառով, որ “ընտրության” ժամանակ սոցիալական գործողության սուբյեկտի համար անշափ կարևոր է նրա վարկանիշը, հեղինակությունը, քանի որ նրա որոշակի պաշտոնի գրադեգման և պաշտոնավարման հիմքում ընկած է ընտրության սկզբունքը: “Նշանակման” ժամանակ հասարակական կարծիքի գործոնը շատ շնչին ազդեցություն ունի պաշտոնավարողի վրա, քանի որ սեփական կարգավիճակը պայմանավորված է ոչ թե ընտրությամբ, այլ նշանակմամբ: Արդի կրթական համակարգում գրեթե բոլոր դեկավար պաշտոնները ձևավորվում են ընտրության միջոցով: Այս պարագայում կոռուպցիայի մակարդակը ձգտում է որոշակի հավասարակշռության: Այդ հավասարակշռությունն ապահովվում է բավարար հեղինակության և նյութական/իշխանական ռեսուրսների միաժամանակ ձեռքբերման միջոցով: Նման մակարդակի կոռուպցիան բոլորին թվում է հանդուրժելի, սակայն առավել նախընտրելին այն դեպքն է, եթե գերակշռում է հեղինակությունը: Պարզվում է, որ դեկավարի փոփոխությունն անպայմանորեն առաջացնում է կոռուպցիոն վարքի տարածվածության տատանումներ: Հիմնականում սկզբնական փուլում, եթե նոր դեկավարը դեռևս յուրային դառնալու, ինտեգրվելու խնդիր ունի կոռուպցիոն վարքը նվազում է: Այդ ընթացքում անցկացվում են հակակոռուպցիոն միջոցառումներ, ոմանք պատժվում են և այլն: Սակայն նյութական ցածր ապահովածությունը դարձնում է անհնարին նման իրավիճակի երկարաժամկետ գոյությունը: Կոռուպցիայի որոշակի տարածվածության անպատճելիությունը և սովորական լինելը հանգեցնում է հեղինակության գործոնի նվազման և հավասարակշռության շեղման ձախից դեպքի աջ: Այս մոդելով կարելի բացատրել կոռուպցիայի ծավալների աճի և նվազման պարբերականությունը:

## **2. Մոդել - Կոռուպցիան խմբի հեղինակության տիրույթում**

Եթե ընդունենք, որ խմբի անդամների բարձր հեղինակությունն ապահովում է խմբի բարձր հեղինակություն և, որ խմբի վարքագիծն ամբողջովին չի մոռացվում և փոխանցվում է մյուսներին /թե խմբի անդամների կողմից և թե խմբից դուրս/, ապա կարելի է ասել, որ խմբի մասին ընդհանուր պատկերացումների հիման վրա կանխատեսվում է խմբի յուրաքանչյուր անդամի վարքը: Այս մոդելով կարելի է բացատրել դպրոցից կոռուպցիոն վարքի նմուշների փոխանցումը բուհ, քանի որ առաջին կուրսի ուսանողի համար բուհն ոչ այլ ինչ է քան մեծ դպրոց, իսկ դասախոսը՝ ավելի խելացի ուսուցիչ: Այս մոդելով կարելի է նաև բացատրել, որ

կոռուպցիոն վարքի կանխարգելման ուշացումը կարող է բերել նրան, որ կոռուպցիան կամրապնդվի որպես ավանդույթ, ինչի տարրերն արդեն իսկ հստակ նկատելի են:

## 2.4 Կոռուպցիոն վարքին հատուկ լեզվական միջոցները և վերբալ վարքը

Բարդ նշանային համակարգերը, որոնք կարգավորվում են որոշակի կանոնների համաձայն կարելի է սահմանել որպես լեզու: Լեզվի տարրերից են լեզվական կլիշեները, որոնք կարծրացած լինելու պատճառով ապահովում են կոնվենցիոնալությունը: Սովորաբար, կոռուպցիոն վարքի նախաձեռնողները օգտվում են սահմանափակ քանակությամբ լեզվական կլիշեներից:

«...եթե դեմ չեք կոնսուլտացիայի ժամանակ ինձ վրա ծախսած ժամանակը փողիասուցեմ...»

«...ո՞նց անենք, որ մեր հարցը դրական լուծվի...»

«...հորեղորս տղան նման խնդիր ուներ ու սենց ձևով լուծվեց, կարծում եմ, որ մեր դեպքում էլ է այդ ձեր պիտանի...»

հատվածներ աշակերտների, ուսանողների և ասպիրանտների հետ  
անցկացված ֆոկուս խմբերից և հարցազրույցներից

«...էժան զմահատական չի լինում, եթե որոշել ես հեշտ ձևով զմահատակամը ստանալ, ուրեմն դրա փոխարեն պետք է ինչ որ բան անես...»

«... դու չես կարող ես առարկան հանձնես, ինչ ես պատրաստվում անել...»

«...ես առարկայից մենակ իմ գրքով կարաք պարապեք ...»

հատվածներ ուսուցիչների և դասախոսների հետ  
անցկացված ֆոկուս խմբերից և հարցազրույցներից

Բերված կլիշեներն առավել տիպականներն են և ունեն շուրջ 10-15 տարատեսակներ:

Կլիշեների առաջին խումբը կիրառում են ուսանողները, որոնք առաջին դեպքում հանդիսանում են կոռուպցիոն վարքի նախաձեռնողներ: Եթե վերլուծենք կլիշեներն ըստ բովանդակության, ապա կտեսնենք, որ ամեն մեկն արտահայտում է որոշակի քայլի դիմելու պատրաստակամություն.

1. Ես պատրաստ եմ դրամ վճարել
2. Ես պատրաստ եմ ընդունել առաջարկը
3. Ինձ համար նախընտրելի տարրերակը հետևյալն է

Հանդիպած բոլոր կլիշեները կարելի է դասել երեք իմաստներից մեկին: Այսպիսով ստացվում է, որ կլիշեն ոչ միայն նախանշում է բանակցության ժամանակ պայմանավորվածության ձեռքբերման սկիզբը, այլև հստակեցնում է նախաձեռնողի դիրքորոշումը և բանակցության գործընթացն ուղղորդում որոշակի հումի մեջ:

Կլիշեների երկրորդ խումբը կիրառում են դասախոսները և ուսուցիչները, երբ իրենք են հանդիսանում նախաձեռնող կողմ:

Կլիշեների այլ բովանդակություն է երևում դասախոսների ու ուսուցիչների մոտ:

Համաձայն կլիշեների բովանդակության վերլուծության, դուրս են քերվել հետևյալ իմաստները

1. Նախազգուշացում
2. Սպառնալիք
3. Այլընտրանքից զրկում

Այս իմաստները, ինչպես և նախորդ դեպքում, հստակեցնում են նախաձեռնողի դիրքորոշումը:

Երբեմն բանակցությունը սկսվում է ոչ քերված տիպական կլիշեներից, այլ նախաբանից, որի միջոցով ուսանողը կամ նրա շահերը ներկայացնող միջնորդը փորձում է հիմնավորել այն պատճառը, որի հետևանքով ուսանողը չի ներկայացել դասերին կամ չի կարողացել հանձնել քննությունը կամ ստուգաբբը: Օրյեկտիվ պատճառներ են հանդիսանում.

1. անվերահսկելիությունը - *ծնողների բացակայություն երկրից; առանձին բնակությունը*
2. առողջական խնդիրներ - *ծանր հիվանդություններ, վիրահատություններ, ծննդաբերություն*
3. զբաղվածություն այլ ոլորտներում – *մարզական մրցումներ, աշխատանք, համերգներ և շրջագայություններ*
4. ընտանեկան նշանակության իրադարձություններ – *մահ, ամուսնություն, զորակոչ*

Ուսուցիչների, դասախոսների հիմնավորումներն են.

1. Ուսանողի անուշադրությունը, ծովությունը և առարկայի նկատմամբ հակում չունենալը
2. Կրթական համակարգի, ուսումնական ծրագրի, դասագրքերի քերի լինելը
3. Կրթօջախում կառուցվածքային փոփոխությունների արդյունքում մատուցվող նյութի և քննությանը պահանջվող գիտելիքի միջև հսկայական տարբերություն
4. ALMA MATER-ին օժանդակելու պարտադիր լինելը

Կոռուպցիայի լեզվի կիրառությունը շատ ծիսականացված է: Հստակ գոյություն ունեն հատկանիշներ, որոնց միջոցով կարելի է բնութագրել բանակցության սկիզբը, բուն բանակցությունը և պայմանավորվածության ամրագրումը:

Բանակցության սկզբին հատուկ են մի քանի հատկանիշներ.

1. ընդունելի բանակցության կողմի մատնանշում/ընտրություն  
*«...ես խնդրում եմ հայրիկիս հետ հանդիպեք, զրուցեք, նա ձեզ կրացատրի քե ինչ պատճառով եմ պայմանավորված թերությունները, հավատացեք, որ բավականին օրյեկտիվ պատճառներ կան...»*

*հատված ավագ դպրոցի աշակերտների հետ անցկացված ֆոկուս խմբից*

«...ուզում եմ ձեզ հետ զրոցեմ իմ երեխայի ապագայի մասին ... հարցեր կամ ... ապագայի խնդիր է, պետք է նրան անպայման օգնել, իո չենք թողնելու, որ նա կործանվի...»

*հատված ուսուցչի հետ խորը հարցազրույցից*

«... ես քո հետ չեմ ուզում խոսել ... զմա մտածի, իմ պիտի անես, որ ստանա ... կամ մեծ եղբայր, եթե ունես, ասս քող զա իրար հետ որոշենք քեզ դուրս ենք թողնում քեզ զաս մոտս պարապելու ...»

*հատված ուսանողների հետ անցկացված ֆոկուս խմբից*

Բանակցության կողմի մատնանշումն առավել հաճախ է հանդիպում դպրոցում և բարձագույն ուսումնական հաստատությունների 1-ին կուրսում: Այս իրավիճակը բացատրվում է նրանով, որ 15-18 տարեկան երիտասարդները չեն ընկալվում, որպես ինքնուրույն որոշում կայացնող և ամենակարևորը ֆինանսական միջոցների տիրապետող:

## 2. ծառայության դիմաց փոխհատուցում տալու պատրաստականության հայտնում

Բանակցության համար ընդունելի կողմի հետ հանդիպումը դեռևս չի նշանակում, որ երկու կողմերն ունեն միևնույն պատկերացում հանդիպման պատճառների և հնարավոր զարգացման վերաբերյալ: Նախաձեռնող կողմը զգուշություն ցուցաբերելով՝ խուսափում է խոսել դրամի մասին և օգտագործում է փոխարինիչներ: Այդ փոխարինիչների բազմազանությունից առավել տիպականները բերվում են ստորև.

Փոխարինիչներ Գործածության օրինակներ

կանաչ	« ... քո գնահատականը կանաչ գրիչով մենակ կդրվի ...»
մանեք	« ... ուրեմն պիտի ֆակուլտետին մի քանի մանեքի օգուտ տաս...»
լավություն	«...մի 50-ի լավությամբ ձեր բարեհոգության տակից դուրս կգա՞մ...»
ժամ	«...գնա երկուշաբթի ժամը 30-ին կգաս...»
բան	«... ես վերցրեք մի բաժակ սուրճ կխմեք, զգույշ եղեք մեջը մի քիչ էլ ուրիշ բան կա ...»

Բոլոր դեպքերում այս փուլում, անգամ, եթե չեն օգտագործվում փոխարինիչներ, ապա ուղակի դրամ, դոլար, եվրո (առավել հաճախ հանդիպող դրամական միավորներ) բառերը բաց են թողնվում նախադասության մեջ:

«...բարեկամս սովորում է ձեզ մոտ և քննությանը դժվարանալու է, կարող եք դասախոսին խնդրել, որ իմ-որ մի կերպ աջակցի, որպեսզի մենք էլ մեր շնորհակալությունը հնարավորությունների շրջանակներում հայտնենք ...»

*հատված ուսանողների հետ անցկացված ֆոկուս խմբից*

Այս փոխարինիչները իմնականում օգտագործվում են այնքան ժամանակ, մինչև երկու կողմերը համոզվում են, որ իրենց առաջարկն ընդունելի է և կարելի է արդեն բանակցել առաջարկվող կամ ակնկալվող փոխհատուցման շափի և ձևի վերաբերյալ:

Բուն բանակցությունն անցնում է գնահատականի, դրա դիմաց ակնկալվող վճարի և այլ մանրամասների վերաբերյալ:

Ուշագրավ է նաև բանակցությունների ավարտը: Սովորաբար ուսանողը կամ աշակերտը, որի շահերից ելնելով էր միջնորդը բանակցում ամբողջ ընթացքում բացակայում է և նրան կանչում են այս փուլում: Սոտեցած ուսանողը կամ աշակերտը տալիս է **խոստում**, իսկ դասախոսը՝ մի քանի խրատ: Խրատելու ընթացքում դասախոսն ուսանողի ուշադրությունը հրավիրում է միջնորդի կամ աշակերտի/ուսանողի որոշակի հատկանիշների վրա, որոնք հանդիսացան ծանրաբաշ պատճառներ՝ օրենքը, ընդունված կարգը խախտելու կամ ընդառաջելու համար:

Հիմնականում խոստումները վերաբերվում են այլևս չբացակայելուն, բաց բողնված գիտելիքի լրացմանը և կրթության նկատմամբ ունեցած վերաբերմունքի վերանայմանը:

Խրատները հիմնականում ունեն նույն բնույթը ինչ խոստումները: Խրատելուց զերծ են մնում միայն երիտասարդ դասախոսները, իսկ միջին և ավագ սերնդի համար խորհուրդներ տալը բանակցությունների ավարտի գրեթե պարտադիր մասն է:

Եթե ուսանողը չի օգտվում միջնորդի ծառայությունից, ապա խրատները և խոստումներն որպես բանակցության եզրափակում, պահպանվում են:

Սիջնորդի հատկանիշներից հիմնականում նշվում է

1. Կոլեգա լինելը
2. Արժանավոր անձանց զավակ կամ ազգական լինելը
3. Ուղղակի հարգանքը
4. Մտավորականի կերպարի մեջ լինելը
5. Ընդհանուր ծանոթներ, ընկերներ ունենալ

Եթե չկա միջնորդ, ապա ուսանողին ասվում է, որ նրան ընդառաջում են

1. մեղք չգործելու
2. նույն տարիքի երեխա կամ բոռ ունենալու
3. ուղղվելու վերջին հնարավորությունն ընձեռնելու և այլնի համար

Ենթադրաբար, հաճոյախոսությունները և սեփական վարքի բացատրությունը բարոյականության, միջանաձնային հարաբերությունների գնահատման, ազգին և հասարակության բերած նպաստի արժենորման դիրքերից ոչ թե բուն մշակութային երևույթ է, այլ հեգերանական դիսկունքորտը մեղմելու մեխանիզմ, որով «ծախվելը» փոխարինվում է «ընդառաջելով», «հարգելով», «խողալով» և այլն:

### 3. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՎԱՐՁԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Հետազոտության մասնակիցները համակարծիք են այն հարցում, որ կոռուպցիայի դեմ կրթական համակարգում անպայման պետք է պայքարել: Պայքարելու համար առանձնացվում է մի քանի պատճառ՝

1. սոցիալ-հոգեբանական առողջ միջավայրում աշխատելու/սովորելու ցանկություն
2. բարձրակարգ կրթություն ստանալու/տրամադրելու անհրաժեշտություն
3. աշխատանքային/ուսումնական պատշաճ պայմանների առկայություն
4. կրթական համակարգի օպտիմալ գործառնություն

Բոլորը պայքարը պատկերացնում են իրեն պետական մակարդակով կազմակերպված միջոցառումների ամբողջություն, որոնք պետք է՝

- ապահովեն ուսումնական գործընթացին առնչվող գործընթացների վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը
- սահմանեն բոլոր կողմերի իրավունքները և պարտականությունները
- սահմանեն բոլոր կողմերի իրավունքների պաշտպանության գործուն մեխանիզմները
- նույնականացվեն բոլոր կրթական հաստատությունների այն գործառույթները, որոնք ապահովում են «ՔՈՒՀ- արտաքին միջավայր կապը»
- ապահովեն “մեկ պատուհանի” սկզբունքը մի շարք հարցերում և վերանայեն կադրային քաղաքականությունը
- հիմք հանդիսանան մասնագիտական եթիկայի ձևավորման համար, որպեսզի բարոյական տիրույթում կարգավորեն սեփական դասագրքերով դասավանդման, ուսանողների հետ մասնավոր պարագելու և այլ նմանատիպ երևույթները
- սահմանեն իրավարակային պատժի միջոցներ, որոնք նախ հնարավոր կլինի կիրառել, և ապա պատիժը պետք է լինի բավականին շշշափելի պատժվողի համար:
- ապահովեն հետադարձ անանուն կապն անմիջապես բուհի կառավարող մարմնի և ուսանողի, դասախոսի միջև
- ուսանողներին և աշակերտներին կամ նրանց ծնողներին տրամադրեն ուսման վճարների կամ պետական ֆինանսավորման դիմաց մատուցվող ծառայությունների ցանկը
- դարձնեն հանրամատչելի կրթական համակարգի ֆինանսական և մարդկային ռեսուրսների կառավարման սխեմաները:

Այս ամենում հարցվողները մեծ դեր են հատկացնում զանգվածային լրատվության միջոցներին, հասարակական կազմակերպություններին և խոշոր գործատուններին:

Զանգվածային լրատվության միջոցներին հարցվողները վերապահում են մի քանի գործառույթ:

- ♣ Առանձին նախադեպերի լուսաբանում
- ♣ Լրագրողական անկախ հետազոտությունների անցկացում
- ♣ Կոռումպացվածության վարկանիշների տպագրություն
- ♣ Կոռուպցիայի դեմ պայքարում տեղեկատվական պատերազմի վարում բոլոր կոռումպացված կառույցների և անձանց դեմ:

Հասարակական կազմակերպությունները մեծ կարևորություն են ստանում հետևյալ գործառույթների իրականացման տեսանկյունից.

- ♣ Հահերի պաշտպանություն
- ♣ հասարակության տարբեր խմբերի հետ բացատրական աշխատանքների վարում և կոռուպցիայից պաշտպանվելու հմտությունների գարգացում
- ♣ Դպրոցների հաշվետվողականության գործում համայնքի ներգրավում

Հարցվողների որոշ մասը վստահ է, որ, եթե գործատուները փոխեն իրենց վերաբերմունքը բուհերի նկատմամբ, ձևավորեն ֆակուլտետների սև ցուցակներ, գործնական աշխատանքների համար ընտրեն, այլ ոչ թե ընդունեն ուսանողների, դրանով իսկ միջնորդված կերպով մեծ ներդրում կունենային կոռուպցիայի դեմ պայքարում: Նման գործողությունները պետք է հանգեցնեն հասարակության մեջ կրթության վերառնորմանը և որպես ինստրումենտալ արժեքի գնահատմանը: Եթե կրթությունը հանդես գա որպես ինստրումենտալ արժեք, այսինքն լինի աշխատանքի շուկայում մրցունակ լինելու գրավական, ապա ուսանողության և աշակերտների այն մասը, որոնք հանդիսանում են կոռուպցիոն փոխհարաբերության նախաձեռնող զգալիորեն կնվազի:

Բոլոր հարցվողները վստահ են, որ կոռուպցիոններները պետք է պատժեն շատ խիստ՝ գրեթե բոլորը նշում են ազատազրկումը, ոմանք առաջարկում են խոշոր դրամական տույժեր մինչև անգամ զույքի պետականացում: Սակայն փորձագետներից շատերը վստահ են, որ կոռուպցիայի հետ նմանատիպ պայքարը կարող է կատվածահար անի կրթական համակարգը: Նման իրավիճակից խուսափելու համար ընդունելի է համարվում գործողությունների հետևյալ հաջորդականությունը: Կրթության ոլորտի օրենսդրական դաշտի կարգավորում և կադրային քաղաքականության վերանայում: Այս ամենի հիման վրա պետք է կատարել այսպես կոչված “համաներում”, այսինքն պայքարի սկիզբ համարվող ժամկետից վաղ դրսերված կոռուպցիոն վարքի համար ոչ մի հետապնդում չիրականացնել, սակայն կոռուպցիայի դեմ պայքարի որոշումը կայացնելուց հետո կիրառել խիստ պատժամիջոցներ:

Կոռուպցիայի ծավալները կրծատելու համար նպատակահարմար է հավարվում առաջարկել հետևյալ միջոցառումների իրականացումը.

1. Մշակել ֆինանսական հաշվետվությունների թափանցիկ և հստակ մեխանիզմ:

2. Ապահովել հաշվետվությունների հանրամատչելիություն և քննարկումների անցկացում:
3. Մշակել մասնագետների անընդհատ ատեսատացիայի և մասնագիտական հատկությունների գնահատման համակարգ, որը թույլ կտա ստեղծել առողջ մրցակցային մթնոլորտ, բնականոն և օբյեկտիվ սերնդափոխություն և զերծ կպահի կամայական նշանակումներից և համակարգի ուղճացումից:
4. Ապահովել հասարակական կազմակերպությունների, նախաձեռնող խմբերի և գանգվածային լրատվության միջոցների մուտքը կրթության համակարգի տարբեր մակարդակներ՝ առկա խնդիրների բարձրացման և հրապարակային դարձնելու համար:
5. Ապահովել գիտելիքի ստուգման գործընթացում ուսանողների և աշակերտների անանունությունը և ստուգողի ու գնահատողի անձերի տարանջատումը:
6. Բոլոր շահագրգիռ կողմերի շրջանում կազմակերպել իրազեկման արշավներ կոռուպցիայի հետ կապված տարբեր թեմաների շուրջ, քանի որ կոռուպցիայի երևոյթի և նրա տարբեր տեսակների մասին լիարժեք պատկերացում ունեցող ուսանողների թիվը բավական փոքր է:
7. Կիրառել խիստ պատժամիջոցներ կոռուպցիոն վարք ցուցաբերողների նկատմամբ և հրապարակել նրանց անունները:
8. Բարձրացնել ուսուցիչների և դասախոսների աշխատավարձը և/կամ որոշակի ապրանքներ ու ծառոյություններ տրամադրել անվճար:

#### 4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդյունքների համաձայն, հետազոտությանը մասնակցած կրթական ծառայությունների մատուցողների և սպառողների ոչ ավել քան 20 տոկոսն է պատշաճ կերպով ընկալում կոռուպցիան: Շատ քչերն են կոռուպցիայի սահմանման մեջ ընդգրկում կոռուպցիոն վարքի բոլոր տեսակները: Դա նշանակում է, որ կրթական ծառայությունների մատուցողների և սպառողների գերակշիռ մեծամասնությունը լիարժեք չեն ըմբռնում կոռուպցիայի տեսակների բազմազանությունը: Կոռուպցիայի մասին խոսելիս սովորաբար հետազոտության մասնակիցները նկատի են ունենում «կաշառակերությունը» և/կամ «պաշտոնական դիրքի չարաշահումը»: Հետազոտության մասնակիցների ոչ զգայի մասն է համարում պաշտոնական կեղծիքը, բարեկամական կապերի օգտագործումը, պետական գույքի հափշտակումը և հովանավորչությունը կոռուպցիի: Կրթության հատվածում կոռուպցիայի հիմնական տեսակներն են «կաշառակերությունը» և «ազգակցական կապերի օգտագործումը», երկրորդ տեղում է «պաշտոնական դիրքի չարաշահումը»:

Համաձայն հետազոտության արդյունքների, կարելի է վստահաբար ասել, որ կոռուպցիան առօրյա պրակտիկայի անբաժանելի մասն է: Այս պնդումը պատճառաբանվում է այն փաստով, որ կրթական ծառայությունների մատուցողների և սպառողների գերակշիռ մասն անցած 5 տարիների ընթացքում կրթության համակարգում նկատել է կոռուպցիոն վարքի աճ, և գրեթե բոլորը, իրենց աշխատանքի կամ ուսումնառության ժամանակ հանդիպել են այդ երևոյթի հետ:

Դասախոսների և ուսանողների միջև ուղղակի կապի բերումով, կոռուպցիան ավելի հաճախ են նկատում բուհերի «ցածր» օղակներում: «Բարձր» օղակներում կոռուպցիայի տարածվածության մասին նշող հետազոտության մասնակիցներն այն բացատրում են բուհի դեկավարների և դպրոցի տնօրենների ձեռքում կենտրոնացած «լիազորությունների և որոշումների ընդունման» լծակներով:

Հետաքրքրական է այն հանգամանքը, որ «ծանրթներն ու բարեկամները», որոնք կրթական համակարգի մաս չեն կազմում, բուհերում և դպրոցներում կաշառակերության գլխավոր միջնորդներից են: Այդուհանդերձ դասախոսները, լաբորատորները և գործավարները ևս կաշառակերության հիմնական միջնորդներ են համարվում:

Ուսանողների շրջանում կաշառակերության արձագանքների տարրերությունը հիմնականում պայմանավորված է բուհով և ֆակուլտետով: Տղամարդիկ նախընտրում են կոռուպցիայի ուղին ավելի հաճախ քան կանայք, որոնք նախընտրում են օրինական ճանապարհը:

Կոռուպցիայի դեմ պայքարի տեսանկյունից կարելի է ենթադրել, որ կոռուպցիայի նկատմամբ կիրառվող պատժամիջոցներին տեղյակ ուսանողներն ավելի են հակված

կոռուպցիայի դեմ պայքարելուն: Ուսանողի ֆակուլտետը ևս ազդում է կոռուպցիայի նկատմամբ նրա կեցվածքի վրա, իսկ կոռուպցիայի արձագանքն ավելի մեծ կախվածություն ունի ուսանողի ֆակուլտետից, քան բուհից:

Հետազոտության արդյունքներն արտացոլում են ուսանողների կարծիքները Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների իրավիճակի վերաբերյալ: Գործուն հակակոռուպցիոն նախաձեռնությունների մշակման համար անհրաժեշտ է ուսումնասիրել սեկտորի հիմնական բացերը և նպաստել քաղաքացիական հասարակության մասնակցությանը նրան անմիջականորեն առնչվող տարբեր գործընթացներում: Ուսանողները կրթության սեկտորի գլխավոր մասնակիցներից են, ովքեր անմիջական ազդեցություն են կրում իրենց ստացած կրթության որակից, և հետևաբար նրանց լիարժեք մասնակցությունը կոռուպցիայի հետ կապված հիմնախնդիրների վերհանման գործում կարող է կարևոր տեղեկությունների աղբյուր դառնալ հակակոռուպցիոն միջոցառումների համար, իսկ նրանց մասնակցությունը վերահսկման տարբեր մեխանիզմներին ավելի թափանցիկ կղարձնի կրթական գործընթացը: